№ 61 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 21

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 21 № 61

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ 1906 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 ռուբլի։ Մարտի 1-ից մինչև 1 յունիսի 2 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարոնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով։ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“ իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

ՁԱՏԿԱԿԱՆ ՏՕՆԵՐԻՆ ՆՈՒԷՐ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ

ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԱՆԵԱՆԻ

1) «Որբիկների արցունքները»	30 կ.
2) «Երկու պահլաւան», (Սասունի հերոսագիրները)	25 կ.
3) «Պստիկ Մհեր»	25 կ.
4) «Սասունցի Դաւիթ», I հ. 40 կ. II հ. 40 կ. նոյնը մի գրքում.	80 կ.
5) «Զգացմունք»	40 կ.
6) «Հենրիխ Պեստալոցցի» (մանկավարժական).	30 կ.

Այս գրքերի վաճառման արդիւնքի 20% յատկացվելու է դժբաղդացած կոզենցիների օգտին։ Դիմել Կենտրոնական, Գուտտէնբէրգ, Թառայեան և Զաքարեան գրավաճառներին, իսկ հեղինակին դիմողները կըստանան 30% զեղչ, կուղարկվի կանխիկ, նաև վերադիր վճարով։ հասցէն՝ Шулаверъ, Григорію Баласанянцъ. (առ) 9—10

ՆՈՐ ԲԱՑՎԱԾ ՀԻՒՐԱՆՈՑ

„ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼ“

Պատիւ ունեմ յայտնելու յարգելի հասարակութեանը, որ այս տարվայ մարտի 1-ից Պեսկօվսկի փողոցում, Չիկօվանիի տանը № 15 (նախկին «Թաւրիզ» համարներ)

ԲԱՑՎԱԾ Է ՀԻՒՐԱՆՈՑ

համարներով. ունի մաքուր բուֆետ և խոհանոց։ Համարները 50 կոպ. և աւելի։
2—5 Յարգանօք Աբէթ Ղայրիմանեանց և Միսակ Սարգսեանց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պարլամենտական ընտրութիւններ. Վերջին տեղեկութիւններ. Հայ-Թուրքական խորհրդակցութեան նիստը. Տեղեկութիւնները գաւառից Գեներալ նահանգապետի կարգադրութիւնը. Մամուլ. Ուսումնարանական համագումարի առիթով. Գանձակի շրջակայքում. Զինւորական ծառայութեան ժամանակի կրճատումը. Դատաստանական դահլիճից. Քաղուածքներ արտասահմանեան հայ մամուլից. Բեմական գործողների համաժողովը. Երկրաշարժ Թիւրքահայաստանում. Դրամատիկական ընկերութեան նիստը. Հայոց բարեգործական ընկերութեան նիստը. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

XIII

Ո՞ւմ պէտք է պատգամաւոր ընտրենք Պետական Դումա ուղարկելու համար։

Մեզնից իւրաքանչիւրը քուէ տալու ժամանակ կը մտածէ այսպէս. «իմ ընտրելին նախ և առաջ պէտք է լինի իմ դաւանանքի, իմ քաղաքական և աշխարհայեացքի համապատասխան մի անձ, իսկ երկրորդ նա պէտք է լաւ ճանաչէ այն երկիրը, այն շրջանը, որի ներկայացուցիչն է լինելու ազգային ժողովում»։

Այդ երկու յատկութիւնները միշտ էլ նշանակութիւն են ունենալու պարլամենտական կեանքում, բայց նրանք աւելի ևս մեծ կարևորութիւն պէտք է ունենան մանաւանդ այժմ, երբ ռուսական պարլամենտը դեռ նոր է սկսում կազմակերպվել և քննութեան առարկայ պէտք է լինեն մի կողմից ընդհանուր պետական կազմակերպութեան հարցեր, իսկ միւս կողմից Ռուսաստանի զանազան մասերի և նրանց թւում Անդրկովկասի քաղաքական շինարարութեան և ինքնորոշման հարցերը։

XIV

Անկասկած՝ ոչ ոք առաջուց չէ կարող գուշակել թէ ինչ դէպքեր, իրերի ինչ դասաւորութիւններ կարող են տեղի ունենալ պարլամենտական առաջին նիստերում և ուրեմն անկարելի է որոշ կերպով պայմանաւորվել թէ ինչ դէրք պէտք է բռնի մեր պատգամաւորը այնտեղ։

Դա ճիշտ է։ Ամեն բան նախատեսել անկարելի է։ Եւ ոչ ոք չէ պահանջում և չէ էլ կարող պահանջել, որ նախօրօք սահմանված լինեն մարդկանց բոլոր քայլերը։ Բայց մեզնից իւրաքանչիւրը ցանկանում է, որ նրա ուղարկած պատգամաւորը գործունէութեան ելակէտ վերցնէր այն քաղաքական կուսակցութեան դաւանանքը, որի անունով նա հանդէս է եկել իր ընտրողների առաջ և վաստակել քուէներ։

Իսկ եթէ պատգամաւորը պէտք է պարլամենտում փոխէ իր դէրքերը, մի գլուխ սիւրպրիզներ ներկայացնէ իր ընտրողների համար, դա կը նշանակէ, որ նա միայն ձայն վաստակելու հոգսերով է զբաղված եղել և խաբել է իր ընտրողներին։

XV

Կան խմբեր, որոնք որոշել են խանգարել Պետական Դումայի առաջին նիստերը, որովհետև Պետական Դուման չէ ներկայացնում այն կատարեալ ազգային ժողովը, որպիսին միայն իրաւունք ունի ռուս ժողովրդի կողմից գումարվել իբրև նրա ներկայացուցիչ և արտայայտել նրա գերագոյն կամքը։

Այդ տեսակէտով բոլորովին հասկանալի է, որ կարող է և բօյկօտ հրատարակվել Պետական Դումայի դէմ և նրա գումարումից առաջ։

Եւ մենք տեսնում ենք, որ թէև առայժմ թոյլ, բայց որոշ չափով բօյկօտ գոյութիւն ունի ընտրութիւնների վերաբերմամբ։ Մի քանիսը բօյկօտը սկսում են հէնց առաջին քայլերից, միւսները յետաձգում են նրան մինչև ընտրութիւնների երկրորդ կամ երրորդ աստիճանները։

Սահմանադիր-ռամկավարները բօյկօտի դէմ են եղել սկզբից և վճռել են մասնակցել ընտրութիւններին այն նպատակով, որ իրանց ընտրած պատգամաւորներին հասցնեն մինչև Պետական Դուման։

XVI

Մի՞թէ չէ կարող պատահել, որ սահմանադիր-ռամկավարները թողնեն պարլամենտը և հեռանան։

Կարող է պատահել։

Շատ անսպասելի բաներ կարող են պատահել։

Բայց դա շատ տարբերվում է այն որոշումից, որ կայացրել են մի քանի ծայրահեղ խմբեր—չը մասնակցել ազգային ժողովի պարապմունքներին։

Սահմանադիր-ռամկավարները գնում են պարլամենտ մաքառելու, գործելու, կռուելու և իրանց ծրագիրը իրագործելու։

Եւ անշուշտ նրանք պէտք է ամեն միջոց գործ դնեն պարլամենտի միջոցով ստանալու այն ամենը, ինչ որ դրել են իբրև պահանջներ և իբրև իրանց ծրագրական կէտեր։

Եւ եթէ մի օր ստիպված լինեն թողնելու պարլամենտը և հեռանալու, նրանք տուած կը լինեն իրանց ընտրած ժողովրդին բաւականաչափ ապացոյց և հաւաստիացում, որ նրանք գործ էին դրել իրանց կողմից ամեն միջոց գործելու պարլամենտի միջոցով, որը սակայն փակեց նրանց համար գործունէութեան ճանապարհները։

XVII

Այն, ինչ որ մեր պատգամաւորը պէտք է արտայայտէ, իբրև մեր ներկայացուցիչ, պէտք է լինի որոշ և հաստատ իր հիմնական մասերում։

Եւ մենք պէտք է այդ բանի մէջ հաստատ լինենք։

Այն տեղերում, ուր պարլամենտական կեանքը վաղուց պատրաստված է, պարլամենտական և հասարակական գործողները բազմաթիւ առիթներ են տուած լինում ճանաչելու նրանց և կշռելու թէ որքան այդ գործողները համապատասխան են այս կամ այն քաղաքական համախմբումների տրամադրութեան։ Մեզանում այդ չը կայ կամ գոնէ իր սաղմնային վիճակի մէջն է գտնվում։

Օրինակ գերմանական պարլամենտի ոչ միայն այնպիսի գործողներ՝ ինչպէս Լասկեր, Րիկկերտ, Րիխտեր, Լիբկնեխտ, Բեբել, կամ անգլիական պարլամենտի անդամներ Գլադստօն, Չեմբերլէն, Բրայտ և ուրիշներ ինքն ըստ ինքեան մի մի ծրագիրներ են եղել, այլ և աւելի սովորական գործողները եղել են մեծ մասամբ շատ յայտնի իրանց ընտրողական շրջաններում, իբրև որոշ դաւանանքի տէր անձեր և կապված են եղել իրանց ընտրողների հետ որոշ ծրագրական կէտերով։

XVIII

Կան եւրոպական պարլամենտներում և սակաւաթիւ այնպիսի պատգամաւորներ, որոնք չեն պատկանում ոչ մի քաղաքական կուսակցութեան և իրանց զգում են բոլորովին անկախ ու ազատ մնալու այս կամ այն համախմբումներին, կամ բոլորովին կղզիացած մնալու։

Այդպիսի պատգամաւորները կամ նախաձեռնող են դառնում նոր քաղաքական կուսակցութիւն կազմելու համար, եթէ իրանք ունեն կենսական կէտեր պարունակող ծրագիրներ, կամ չեն ներկայացնում առանձին ծրագիր և իրանց պատեհ են համարում ամեն մի դէպքում, ամեն մի խնդրում կշռել հանգամանքները և բռնել այս կամ այն դիրքը։

Այդպիսի պատգամաւորները յայտնի են «վայրենի» անունով։

Ժամանակով մենք էլ կունենանք պարլամենտական «վայրենիներ» և անկասկած, որոշ դէպքերում ուրախ կը լինենք նրանց երևան գալով։ Բայց այժմ «վայրենիների» ժամանակը չէ և նրանք շատ կը փչացնեն գործին, մանաւանդ Կովկասում։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բագու, 19 մարտի

Անցեալ տարվայ փետրվարեան անկարգութիւնների ժամանակ Աղամեանի և Բէյբուլեկօվի սպանութեան համար դատարանը Քերիմ և Մախմուտ-օղլուն դատապարտեց տաժանակիր աշխատանքների 6 տարով, Րահիմին պատժական մասում 1 տարով, իսկ երկուսին արդար ճանաչեց։

—

Բագու 20 մարտի, 10 ժամ 23 ր.

Բօղդան Դօլուխանեանը առողջանալու ճանապարհի վրա է։ Այսօր գնդակը հանեցին։

—

Երէկ Թիֆլիսում լուրեր սկսեցին պտտւել, որ Շուշու մօտ Աղդամի շրջանում տեղի են ունեցել անկարգութիւններ։ Ճիշտ տեղեկութիւններ չը կան թէ ինչ տեսակ անկարգութիւններ են եղել։ Իբրև օրինակ հաղորդում ենք հետևեալ մասնաւոր հեռագիրը։

Շուշի, 20 մարտի 1 ժամ 31 ր.

Ճանապարհ մի ընկնէք։ Ճանապարհները երկիւղալի են։ Աղդամում անկարգութիւններ են տեղի ունեցել։

Գ.

Սպասում ենք աւելի մանրամասն հաղորդագրութեան։

—

Էջմիածին 20 մարտի, 11 ժամ 55 ր.

Գէորգեան ճեմարանից հեռացվեց Տէր-Միքէլեան աշակերտը ուրիշի թղթակցութեան համար։ Մանրամասնութիւնները նամակով։

Վ. Սիրտ

—

Մարտի 19-ին, առաւօտեան մօտ ժամը 4-ին, Կարյեաղ կայարանի մօտ զինված թուրքերի մի խումբ յարձակվեց պահակային տնակի վրա, մի քանի անգամ կրակեց, որից յետոյ քշեց պահապաններին պատկանող տաւարը։

—

Գորիս 18 մարտի

Շնաթաղ գիւղի բնակիչները դիմեցին Զանգեզուրի գաւառապետին և խնդրեցին վերադարձնել նրանց անասունները, որոնք անցեալ տարի գողացված էին և տարված դէպի Պարսկաստան։ Այդ անասունները գտնվել էին մի քանի ամիս սրանից առաջ Ջուլֆայի մօտերքում։ Գաւառապետը համապատասխան կարգադրութիւն արեց և իմաց տուեց սահմանապահ վարչութեան։

—

Գորիս 19 մարտի

Ալիկուլիքենդ և Զէյվա հայ գիւղերը յարմար են գտնում փոխանակելու իրանց բնակատեղը Բայեանդուր թուրքական գիւղի հետ։ Այդ իմաստով նրանք արել են դիմում վարչութեան։ Յոյս կայ, որ գիւղացիների այդ խնդիրքը արգելքի չը հանդիպի, որովհետև Բայեանդուրի թուրքերի համար էլ նպաստաւոր է։

—

Ջիվանշիրի գաւառի ազգաբնակութեան ընտրեալներ՝ Պետրոսեանը, Գալուստեանը, Անաստասեանը և Գաբրիէլեանցը մարտի 16-ին դիմել են Կովկասեան Փոխարքային հետևեալ հեռագրով. «Մինչև գաւառում խաղաղութիւն վերականգնելը մենք, հայ ազգաբնակութիւնս, նեղվում էինք թուրք աւազակախմբերից։ Շնորհիւ գեներալ Գօլօշչապօվի գալուն գաւառում կարգը վերականգնվեց, դրա հետ մի և նոյն ժամանակ վերականգնվեցին հայերի ու թուրքերի խզված յարաբերութիւնները։ Դժբախտաբար, գեներալի հեռանալուց յետոյ, թուրքերը նորից սկսեցին յուզվել։ Արդէն հինգերորդ դէպքն է, որ թուրքերը խախտում են օրինական կարգը։ Անհամբերութեամբ և յուսով սպասում ենք գեներալ-խաղաղարարին կարգը վերականգնելու և յանցաւորներին պատժելու համար»։

—

Շուշի, մարտի 17-ին

Մարտի 13-ին դաշարեցի 10 զինված թուրքեր, 50 կոզակներ՝ մի օֆիցերի հետ, հաշտարար միջնորդ Երմօլայեվի, պրիստաւ Ֆատիի և մի մօլլայի առաջնորդութեամբ գալիս են մտնում Շէխեր հայ գիւղը՝ իբրև թէ խուզարկելու և Ղաջար թուրք գիւղից բերված թալանը գտնելու նպատակով։

Խուզարկութիւնը ոչ մի դրական հետևանք չունենալով և ոչինչ չը գտնելով, վերցնում են նոյն գիւղացի Պօղոս Աւագեանցի 8 գլուխ տաւարը, մի հրացան, տան մէջ աչքի ընկնող արժէքաւոր իրերը և իրան, Պօղոսին, ձերբակալում։

Այնուհետև մտնում են գիւղի մէջ գտնվող միւս տները, թալանում նոյնպէս բոլոր արժէքաւոր իրերը։

Մի քանի տներում գտնվող օղիի կարասները կոզակները բանալով՝ սկսում են թէ խմել և թէ լիքը կարասները կոտրել։

Մի փոքր երեխայ նկատում է կոզակներին, որ ինչքան կամենում են խմեն, էլ ինչու են օղին փչացնում։ Դրան իբրև պատասխան՝ կոզակները սկսում են անխնայ ծեծել խեղճ երեխային։ Վերջինիս հայրը միջամտելով, այժմ էլ սկսում են դրան սաստիկ կերպով ծեծել, արիւնլուայ անել։

Երեխաների լաց ու կոծը, կանանց շիւանը, տղամարդկանց սարսափը աներևակայելի էր…

Սարսափը ստիպում է գիւղացիներին թողնել տուն ու տեղ այդ վոհմակների տրամադրութեան տակ և փախչել գիւղից։ Այդ հանգամանքը աւելի ևս խրախուսում է թուրքերին և կոզակներին ազատ կերպով մուտք գործել անտէր մնացած տները ու թալանի պակասորդը լրացնել…

Երիտասարդներից մի քանիսը երբ դիմում են օֆիցերին, Երմօլայեվին և Ֆատիին իմանալու համար, թէ իրանց որ մեղքի համար արժանանում են այդ օրինակ աւերածութեան, տղա-չինօվնիկները պատասխանում են երիտասարդներին հայհոյանքներով։

Եւ այսպէս՝ Շէխեր գիւղը ենթարկվելով այդպիսի մի դժբախտութեան, մինչև օրս էլ գիւղացիների համար անյայտ է թէ ինչն էր այդ անակնկալ դժբախտութեան սկզբնապատճառը։

Մարտի 17-ին Ալիանլուի թուրքերը յարձակվում են Հին-Թաղլար հայ գիւղի վրա և տանում 50 գլուխ ոչխար և այծ, և երկու հովիւների ձեռքից զէնքերը խլում։

Մարտի 13-ին Գիւլաբլու գիւղացի մի քանի թուրքեր գաղտագողի մօտենում են Նոր-Շէն հայ գիւղի գոմերին և ուզում են հրդեհել սրանց, սակայն հայերը անմիջապէս վրա հասնելով, կարողանում են հալածել թուրքերին։

Նոյն այդ Գիւլաբլու գիւղի թուրքերից մի քանի հոգի մարտի 12-ին Ղըզղալա հայ գիւղի մօտ դարան են մտնում ինչ որ անցորդ գիւղացի հայերի յափշտակելու թէ սպանելու դիտաւորութեամբ, սակայն անցորդ հայերը կարողանում են հարայ-հրոց բարձրացնելով և փախուստ տալով ազատվել։

Այդ դարան մտած թուրքերը մի քանի անգամ հրացան են արձակել ճանապարհով անցնող ռուս ատրճանաւորների վրա, հաւանօրէն այն մտքով, որ ատրճանաւորներին կարծել տան թէ իրանց վրա հրացան արձակողները Ղըզղալա գիւղի հայերն են։ Եւ այդ պրօվոկատօրական զզուելի միջոցը թուրքերը գործադրում են և այն պատճառով, որպէս զի կարողանան իրանց յանցանքը—այդ մի և նոյն ճանապարհի վրա անցեալներում պրիստաւ Միրզոյեվի և ռուս օֆիցերի սպանութիւնը գցել հայերի շլինքին։

Եւ պէտք է խոստովանել, որ այդ միջոցը իր արդիւնաւոր հետևանքն ունեցաւ. Ղըզղալա գիւղը իշխանութեան կողմից ենթարկվեց 3000 ր. տուգանքի…

Մարտի 16-ին 5—6 զինված քրդեր յարձակվում են Բալուջա հայ գիւղի արօտավայրում արածող տաւարի վրա՝ դրան քշել տանելու նպատակով, սակայն տաւարածի բարձրացրած հարային վրա հասնելով հայ գիւղացիները, քրդերը թողնում և փախչում են։

Վերև բերած փաստերը ապացուցանում են, որ Շուշու գաւառում թուրքերը աշխատում են նորից յուզել գեներալ Գօլօշչապօվի օրով իրականութիւն ստացած խաղաղ տրամադրութիւնը։ Հայերը թուրքերի այդ արարքները տեսնելով՝ իրանք ևս յուզվում են։ Եթէ կառավարութիւնը ներկայումս ձեռք չը զարկէ այդ կայծերը տեղն ու տեղը հանգցնելու, երկիւղ ենք կրում, որ նորից չը բորբոքվէ հրդեհը Շուշու գաւառում։

Հարկաւոր են շուտափոյթ և խիստ միջոցներ միանգամից վերջ տալու թուրքերի վերանորոգած վայրագութիւններին։

Սուրէն

—

Բագու, 16 մարտի

Բօղդան Դօլուխանեանի առողջութիւնը առաւօտվանից փոքր ինչ լաւ է։ Երեք անգամ խորհրդակցութիւն է եղել բժիշկների։ Գնդակը մտել է մէջքից և եկել է կուրծքի վերևը, կաշուի տակը մնացել է. դեռ չեն հանել։ Բժիշկների կարծիքն այն է, որ դրութիւնը վտանգաւոր չէ, եթէ ստամոքսը փչացած չէ։

Այս երեկոյեան դարձեալ լինելու է կոնսիլիում։ Թէ զարկերակը և թէ ընդհանուր դրութիւնը բաւարար է. եթէ այսօր վաղը չը բորբքվի, կարող է բոլորովին վտանգը անցած համարվել։

Ինչ վերաբերում է յանցաւորներին, պէտք է ասել, որ շատ շատերը տեսել են մաուզեր ռեվօլվերից արձակել է մի երիտասարդ, որը յետոյ փախել է, մտել Կաճկաճեվի տան բակը, էլի մի քանի գցելով դուրս է եկել միւս փողոց և փախել է։ Ենթադրում էին, որ կամ հայ է կամ վրացի, և ոչ թուրք… Իսկ յետոյ պարզվեց հետևեալը. մի քանի ժամանակ առաջ մի ինչ որ խմբի, կողմից, որը իրան անուանում է «անարխիստ-կոմմունիստների» խումբ, երկու հոգի եկել էին նրա մօտ և ինչ որ բանուորների կողմից պահանջել, որ նրանց այրած բաների համար վարձատրութիւն տրվի. (դա որ և օգոստոսի դէպքերի խնդիր է)։ Նա պատասխանել էր՝ «դրանք մեր բանուորները չեն, այլ կապալառուի, ուրեմն մեր գործը չէ»։ Իսկ նրանք էլի եկել էին և վերջը նամակ էին գրել սպառնական, որով պահանջում էին երկու օրվայ ընթացքում բաւականութիւն տալ, ապա թէ ոչ ամենածայրահեղ միջոցների կը դիմեն. ստորագրած էր «Բագուի խմբակ անարխիստ կոմմունիստների»։ Նամակը մարտի 9-ից էր. Դօլուխանեանը նամակի վրա ոչ մի ուշադրութիւն չէր դարձրել։

Հ.

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ՆԻՍՏԸ

Հայ-Թուրքական համագումարի կողմից ընտրված ժամանակաւոր խորհրդակցութիւնը մարտի 17-ին ունեցաւ մասնաւոր մի նիստ, որին մասնակցում էին անդամներ պ.պ. Թօփչիբաշէվ, Կազանալիպօվ, Զիւլգադարօվ, Շախմալիէվ, Վէքիլօվ, Ա. Խատիսեան Ալ. Քալանթար, բժ. Ստեփանեան, Ս. Յարութիւնեան և կանդիդատներ — Լ. Սարգսեան ու Հ. Առաքելեան։ Խորհրդակցութեան անդամներ պ.պ. Յարութիւնեան և Վէքիլօվ յայտնեցին, որ համաձայն իրանց տրված յանձնարարութեան նախորդ նիստում, նրանք այցելեցին Փոխարքայի դիւանատան կառավարիչ պ. Պետերսօնին և յանձնեցին նրան զեկուցագիր յանուն Փոխարքայի։ Պ. Պետերսօնը հաղորդեց, որ Փոխարքան ցանկանում է շուտով կազմել տալ տեղական նահանգապետների և գաւառապետների մօտ խորհուրդներ և ընտրութեան եղանակը, իրա պ. Պետերսօնի կարծիքով, երևի կը թողնվի հայերի և մուսուլմանների հոգևորականութիւնների ծայրագոյն ներկայացուցիչներին։

Պ. Թօփչիբաշէվը զեկուցեց, որ նա և խորհրդակցութեան անդամ պ. Զիւլգադարօվը այսօր ներկայացան Փոխարքայի դիւանատան պ. կառավարիչին իմանալու, թէ ինչ է արված խորհուրդներ կազմելու և ազգաբնակութիւնից խորհրդակցութեան անդամներ ընտրելու համար և ինչ բանի մէջ է կայանալու խորհրդակցութեան ֆունկցիան։

Դիւանատան կառավարիչ պ. Պետերսօնը բացատրեց, որ խորհուրդներ կազմելու և խորհրդակցութեան անդամներ ընտրելու համար դեռ ևս ոչ մի կարգադրութիւն չէ արված, իսկ առանձին խորհրդակցութեան ֆունկցիան կայանալու է նրանում, որ պէտք է քննեն և տան իրանց եզրակացութիւնները կովկասեան Փոխարքային ներկայացնելու համար, այն բոլոր հարցերի մասին, որոնք վերաբերում են հայ-թուրքական յարաբերութիւններին։ Խորհրդակցութիւնը, ուշադրութեան առնելով այդ զեկուցումը, որոշեց, նորից խնդրել Փոխարքային շտապեցնելու տեղական խորհուրդներ կազմելու և մասնաւոր խորհրդակցութեան համար անդամներ ընտրելու գործը, իսկ մասնաւոր խորհրդակցութեան ժամանակաւոր անդամների ներկայ կազմը սկսէ իր գործունէութիւնը և խնդրել Փոխարքային մասնաւոր խորհրդակցութեան նախագահ նշանակել գեներալ-լէյտենանտ Ե. Դ. Մալամային և հաստատել Փոխարքայի դիւանատան կից առանձին գործավարութիւն դրա համար։

Դրանից յետոյ խորհրդակցութիւնը զբաղվեց Ղազախի գաւառի վիճակի և զանազան տեղերում ազգաբնակութիւնը զինաթափ անելու հարցի մասին։ Ղազախի գաւառի առիթով զեկուցեցին, որ գեներալ-մայոր Լեվիցկին, Թռուցիկ զօրախմբի հրամանատարը, հայերի ու մուսուլմանների վնասները հաշուել է 660 հազար ռուբլուց աւելի, և հրամայել է բոլոր գիւղերին մինչև ներկայ մարտի 20-ը ներկայացնել իւրաքանչիւր գիւղից հասնող գումարը առանձին, հակառակ դէպքում սպառնում է ոչնչացնել այն գիւղերը, որոնք անկարող կը լինեն վճարել, նրանց հողերը խլել և տալ ներքին նահանգներից եկող գաղթականների, իսկ այդ գիւղերի բնիկ ժողովրդին արտաքսել գաւառի սահմաններից։

Խորհրդակցութիւնը, գտնելով, որ վնասների չափը և ստանալու եղանակը պահանջում են նոր և աւելի լուրջ քննութիւն և, որ այն գիւղերը, որոնց վրա դրված են այդ տուգանքները, ոչ մի դէպքում չեն կարող վճարել միանուագ իրանցից պահանջվող գումարը, որոշեց խնդրել Փոխարքայից, որ առաջարկէ գեներալ մայոր Լեվիցկուն յետաձգել վնասների ստացումը մինչև որ խորհրդակցութիւնը ներկայացնէ այդ մասին իր եզրակացութիւնը ինչպէս վնասների չափի, նոյնպէս և նրա ստացման աւելի յարմար ձևի մասին։

Ապա խորհրդակցութիւնը գտնում է, որ ազգաբնակութեան զինաթափ արվելը ներկայումս, և այն ձևով, ինչպէս այժմ կատարվում է, չէ համապատասխանում հայ-թուրքական խորհրդակցութեան համար Փոխարքայի տուած րէզօլիւցիային, ուստի որոշեց. խնդրել Փոխարքայից, որ առաջարկէ տեղական նահանգական և գաւառական իշխանութիւններին այլ ևս զինաթափ չանել ազգաբնակութիւնը, մինչև որ մասնաւոր խորհրդակցութիւնը դրա մասին ևս ներկայացնէ իր կարծիքը։

Յիշեալ որոշումները, դիւանատան կառավարիչ պ. Պետերսօնի միջոցով, Փոխարքային հաղորդելու համար խորհրդակցութիւնը յանձնարարեց պ.պ. Թօփչիբաշեվին և Յարութիւնեանին, իսկ յաջորդ մասնաւոր նիստը նշանակեց մարտի 18-ին երեկոյեան ժամի 6-ին։

ԹԻՖԼԻՍ ՔԱՂԱՔԻ, ԹԻՖԻՍԻ ԵՒ ԲՈՐՉԱԼՈՒԻ ԳԱՒԱՌՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ԳԵՆԵՐԱԼ-ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Ի նկատի առնելով Թիֆլիսում լոյս տեսնող ամենօրեայ «Нов. Обоз.» թերթի բռնած վնասակար ուղղութիւնը, որը թերթի խմբագրութիւնը չուզեց փոխել իմ նախազգուշացումից յետոյ ևս, ես մարտի 17-ին որոշեցի, փակել յիշեալ թերթի հրատարակութիւնը զինուորական դրութեան Թիֆլիսում և նրա գաւառում տևողութեան ամբողջ ընթացքում։

Գեներալ-մայոր Տիմօֆէյէվ։

—

Թիֆլիսում հրատարակվող «Ցնօբիս-Փուրցելի» թերթում մի քանի անգամ տպագրվել են յօդուածներ ու թղթակցութիւններ Քութայիսի նահանգից, որով աշխատում էր յիշեալ տեղերում գործող զօրքերի գործողութիւնները լուսաբանել սխալ կերպով։

Ապա յիշեալ թերթի վերջին համարներից մէկում, չը նայելով իմ նախազգուշացման խմբագրութեանը աւելի ուշադիր վերաբերվելու աշխատակիցների տուած նիւթերին, դարձեալ տպագրված էր մի թղթակցութիւն Իմէրէթիայից, որը և արտատպել էր «Нов. Обоз.» թերթը, որով բացէ իբաց մեղադրում է զօրքերին ամեն տեսակ չեղած բաներում, որ իբրև թէ կատարել են հրդեհումներ, սպանութիւններ, առևանգումներ և այլն։

Ուստի Թիֆլիս քաղաքի, Թիֆլիսի և Բօրչալուի գաւառների ժամանակաւոր գեներալ-նահանգապետը առաջարկել է «Ցնօբիս-Փուրցելի» թերթի խմբագրութեանը երեք օրվայ ընթացքում ներկայացնել անհերքելի ապացոյցներ, որ յօդուածի մէջ յիշված դէպքերը արդարև տեղի են ունեցել և ոչ թէ հնարել է թերթի թղթակիցը։ Խմբագրին նախազգուշացրել են, որ եթէ, այդ ապացոյցները նա չը ներկայացնէ, այն ժամանակ թերթը կը փակվի զինուորական դրութեան ամբողջ տևողութեան ընթացքում Թիֆլիսում և նրա գաւառում։

Մարտի 17. 1906 թ.։

ՄԱՄՈՒԼ

Հայ մամուլի օրգանները հետզհետէ աւելանում են, կամ, եթէ կամենայինք մի քիչ գաւհիկ ոճ գործածել, սունկի պէս ամեն օր բուսնում են: Կան մարդիկ, որոնք շատ էլ մխիթարական երևոյթ չեն համարում լրագրական այդ ճոխութիւնը և կարծում են, որ դրանով մամուլի գինն ու արժէքը ընկնում է: Մենք այդ կարծիքի չենք և գտնում ենք ընդհակառակը, որ լրագրական ճոխութիւնը, առատութիւնը ոչ մի վնաս չէ կարող հասցնել հայ մամուլին, որ այնքան երկար ժամանակ կաշկանդված և խանձարուրների մէջ կաշկանդված է եղել: Ոչ մի տեղ, ոչ մի բանի մէջ ազատութիւնը վնասակար չէ եղել և չէ կարող լինել, մանաւանդ խօսքի մէջ: Ազատ խօսքը, լայն, բաց-համարձակ խօսքը հասարակական, քաղաքական, կրթական զարգացման էական պայմաններից մինն է: Թող ամեն մի կարծիք արտայայտվի, թող ամեն մի կուսակցութիւն, որ ունի որոշ դաւանանք, հասարակական, քաղաքական որոշ իդէալներ—ազատօրէն կարողանայ բացատրել, ցոյց տալ իր այդ դաւանանքը և պարզել իր իդէալները: Կարծիքները կը զտվին, դաւանանքները, ուղղութիւնները կորովին, ձգտումները կարտայայտվին և հրապարակի վրա կը մնայ նա, ով աւելի կենսունակ, զօրեղ է և ով ամենից շատ հանդիսանում է առողջ, մաքուր, մարդասէր և փրկարար մտքերի արտայայտիչ:

Վերջերս երևացին մի քանի հայ շաբաթաթերթեր—Աշխատանք, Յոյս, Դիտակ. երևում են դեռ էլի մի քանիսը: Առաջինի մասին մենք արդէն խօսել ենք. վերջինների մասին առանձին խօսելու հարկ չենք տեսնում, որովհետև մենք չենք կարծում, որ «Յոյսի» և «Դիտակի» պէս թերթերը որ և է պլիւս կարողանան աւելացնել հայ մամուլի վրա. բայց մենք չենք կարող չողջունել մի նոր թերթի երևումը, որ սկսեց լոյս տեսնել ամսիս 18-ից: Դա—«Կեանք» թերթն է, որի խմբագիր-հրատարակիչն է պ. Բ. Իշխանեան, որի հետ «Մշակի» ընթերցողները ծանօթ են, քանի որ երկար ժամանակ աշխատակցել է մեր թերթին:

Նոր թերթը աչքի է ընկնում ամենից առաջ նրանով, որ շատ մեկին, շատ որոշ և կտրուկ կերպով պարզում է իր ուղղութիւնը, դաւանանքը, աշխարհահայեացքը և ծրագրի ամբողջութիւնը և հասարակութիւնը պէտք չունի երկար սպասելու և ակնկալելու թէ երբ կը պարզվի այդ ուղղութիւնը: Առաջին քայլից դուք գիտէք ում հետ գործ ունէք, դուք տեսնում էք ո՞րն է նոր թերթի հասարակական իդէալը, քաղաքական դաւանանքը:

«Կեանք» — մարքսիստական-ընկերավարական կազմակերպութեան օրգան է: Այն «Աստուածը», որին նա պիտի պաշտէ, բոլորովին այլ է: Նրա ընդհանուր փայփայանքի առարկան լինելու է ոչ թէ հայ ժողովուրդը, ընդհանուր հայութիւնը իր բոլոր խաւերով, այլ հայ բանւոր դասակարգը, հայ պրօլետարիատը, որը, «Կեանքի» կարծիքով, պէտք է ունենայ և ունի իր դասակարգային առանձնայատուկ շահերը և քաղաքական-կուսակցական տարբեր ձգտումները՝ իբրև մի ինքնուրոյն դասակարգ և հասարակական ուրոյն մեծութիւն»:

Ի հարկէ, ապագան ցոյց կը տայ, թէ ո՞րքան աջողութեամբ կը կատարէ նոր թերթը իր սահմանած միսիան, բայց չենք կարող չը նկատել նոր թերթին, որ չափազանցրած է նրա այն կարծիքը, թէ մինչև այսօր հայ մամուլը չէ զբաղվել բանւորական դասակարգի շահերով:

«Կեանքի» շօշափած մի երկու առօրեայ հարցերի մասին կարող ենք անել նկատողութիւններ, բայց դեռ առիթներ կունենանք խօսելու:

Յամենայն դէպս մենք ողջունում ենք «Կեանքի» երևումը հայ գրական հօրիզոնի վրա, իբրև ժողովրդական համակրելի ուղղութիւն և դաւանանք ունեցող թերթի:

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԱՌԻԹՈՎ

Մեծ գոհունակութեամբ կարդացինք, որ Վեհափառ կաթողիկոսը հրամայել է մի համագումար կազմել Էջմիածնում մեր ազգային լուսաւորութեան մեծ խնդիրը մշակելու նպատակով:

Մեր փտած դպրոցական ձևերը վաղուց արդէն ձանձրացրել և յուսահատեցրել են մեզ: Մեր ազգային լուսաւորութիւնը չափազանց շատ է յետ մնացել ժամանակի պահանջներից և իր ծրագրական և հակառողջական հնացած ու անպէտքացած սիստեմով մի անախրօնիզմ է:

Ես այժմ չեմ ուզում մանրամասն բացատրել այստեղ, թէ ի՞նչ են արդի դպրոցի պահանջները և ինչո՞ւ ենք յետ մնացել մենք ժամանակից: Բաւական է ասել, որ մեր թեմական դպրոցներում դեռ ևս գոյութիւն ունին 5—6 կրօնական առարկաներ, որոնք սահմանված են, կարծես միայն ուղեղ բթացնելու և անհաւատութիւն ներշնչելու պատանիներին, և բացակայում են տարրական տեղեկութիւններ հողագործութեան, անասնապահութեան, առողջապահութեան, հիւանդախնամութեան, իրաւաբանութեան, տնտեսագիտութեան և այլ գործնական գիտութիւնների մասին:

Բաւական է ասել, որ մեր ամբողջ երկրում չը կայ ոչ մի մասնագիտական (երկրագործական, արհեստագիտական, գիւղատնտեսական) դպրոց: Բաւական է գիտենալ, որ մեր տարրական ուսումնարաններում երեխաներին դեռ ևս ներվային են դարձնում յիմար հէքիաթներով, «ըստ գերմանական մեթօդի»: Ուստի համագումարին պէտք է մասնակից անել այն բոլոր բանիմաց, թարմ ույժերը, որոնք հետաքրքրվում են ընդհանուր լուսաւորութեան հարցով և որոնք կարող են նոր հոսանք մտցընել մեր լճացած դպրոցական կարգերի մէջ:

Անշուշտ մանկավարժները պիտի մեծ տեղ բռնեն այս համագումարի մէջ, բայց չը պէտք է մոռանալ, որ միայն նրանց չէ վերապահված լուսաւորութեան մասին դատելու մենաշնորհը: Ես թոյլ կը տամ ինձ մինչև անգամ ասել, որ ընդհակառակը, գոնէ մեր մանկավարժներն արդէն խճճված են հնացած մանկավարժական դաւանանքներով, որ նրանք ընտելացած լինելով որոշ դպրոցական կարգերի, հազիւ թէ հիմնական բարեփոխութիւնների ինիցիատիւ ունենան:

Այն ինչ, մեր կարծիքով, հէնց այդ հիմնական խնդիրների վրա պիտի ծանրանայ համագումարը: Մեր կարծիքով պէտք է ստեղծվեն բոլորովին նոր ուսումնարանական տիպեր մեր նորագոյն գործնական, ուտիլիտար հիմունքների վրա: Պէտք է հիմնովին նորոգվի թեմական կամ միջնակարգ կոչված դպրոցների ծրագիրը և պէտք է ստեղծվեն գաւառական դպրոցներ մասնագիտական սպեցիալ պրոգրամով:

Այսպիսի հարցերի քննութիւնը հասարակական նշանակութիւն ունի. հասարակութեան ներկայացուցիչներն են, որ պիտի որոշեն, թէ ինչ տիպի դպրոցներ են հարկաւոր իրանց գաւառի ու համայնքի շահերի համար: Մի տեղ ժողովուրդը պահանջ ունի երկրագործական դպրոցի, միւս տեղ արհեստագիտական, կամ այգեգործութեան ուսումնարանի: Մի տեղ ուսումնարանում անհրաժեշտ կը լինի աւանդել, օրինակ շերամապահութեան դասեր, միւս տեղ անասնապահութեան, մի երրորդում—մեղուաբուծութեան, կամ կանացի աշխատանքի դասեր:

Կրկնում ենք, մեր գործնական դարը միանգամայն փոխել է մեր հայեացքները ժողովրդական լուսաւորութեան մասին և համագումարը իր բարձրութեան վրա պէտք է կանգնած լինի, երբ նա գումարվում է այսպիսի մի մօմենտում:

Ուստի համագումարին անպայման պէտք է հրաւիրվեն ներկայացուցիչներ մեր բոլոր գաւառներից և դասակարգերից, այլապէս երկիւղ կայ, որ այդ վերին աստիճանի համակրելի ձեռնարկութիւնը ապարդիւն կանցնի, գոնէ շատ քիչ զարկ կը տայ մեր ազգային լուսաւորութեան առաջադիմութեանը: Ժողովրդի ընդհանուր ներկայացուցչութիւնը մանաւանդ անհրաժեշտ է, որովհետև ժողովուրդն է դպրոցի պահողը, հետևաբար, նրան է վերապահված տնօրինելու իր դպրոցը,—մի բան, որը մինչև օրս մոռացված էր կամ անիրագործելի էր քաղաքական պայմանների տեսակէտից: Այսօր, երբ հայ եկեղեցին և ուսումնարանը ինքնավարական (աւտօնօմ) են դարձել, մենք, բոլոր քաղաքացիներս, իրաւունք ունինք տնօրինելու մեր դպրոցի վիճակը:

Վ. Արծրունի

ԳԱՆՁԱԿԻ ՇՐՋԱԿԱՅՔՈՒՄ

Մարտի 16-ին

Անցեալներում Թօփալհասանլուեցիք քշեցին տարան բրաջրեցիների ոչխարի հօտը, որի հետքերը բերին քաղաքիս Բաղմանլար թաղը:

Ոչխարի տէրն եկաւ այս մասին գանգատվեց գեներալ-նահանգապետին և աղերսելով յայտնեց, որ եթէ մինչև երկու օրը ոչխարը չը վերադարձվի իրան, գիւղում մնացած գառները սովից կը կոտորվեն: Ոչխարների վերադարձնելը յապաղեց, գառները սովամահ լինելով կոտորվեցին: Դժբախտաբար այնպիսի դարում ենք գտնվում, որ մինչև անբերրի նման գողերը չեն բացվում, չեն բռնում, կամ ուրիշ խօսքով մինչև երեխան լաց չէ լինում, ծիծ չեն տալիս: Ոչխարատէրի յաճախ դիմումներն այն բարերար հետևանքներն ունեցան, որ գեներալ Ալիխանի հրամանով Բաղմանլար թաղը խուզարկութեան ենթարկվեց և հայ գիւղացին մի ոչխարի հօտի մէջ ճանաչեց միայն իր հօտից երեք ոչխարներ:

Գործը նորից քննեց. գիւղացին նորից սկսեց անհանգստացնել իշխանաւորների քունն ու հանգստութիւնը, նորից սկսեց թակել Ալիխանի դուռը: Նահանգապետը ոչ մի կասկած չունենալով իրողութեան մասին, հրամայում է ոստիկանապետին անմիջապէս Բաղմանլար թաղից առնել կամ ոչխարները կամ հօտին 6 րուբլի արժէքը: Ոստիկանապետը շատերին միանգամայն անհասկանալի պատճառով, գիւղացուն ուղարկում է դատարան: Նահանգապետի բացակայութեան պատճառով գիւղացին վերադառնում է ձեռնունայն դէպի Բրաջուր:

Բրաջրից մօտ 7—8 վերստ հեռաւորութեան վրա է գտնվում վատահամբաւ Թօփալհասանլուեցիների և բաղմանլարցիների ձմերանոցը: Ի՞նչ անեն, որ վրէժխնդիր լինեն իրանց հանգստութիւնը խանգարող 50 տուն հայ ունեցող բրաջրեցիներից: Նրանք բացարձակաբար որոշում են սարքել մի վերին աստիճանի սուտ և անամօթ դաւադրութիւն...

Գիշերվայ պահուն ձմերանոցից լսվում են հրացանաձգութեան ձայներ... Միւս օրը թուրքերը իշխանութեանը գանգատվում են, որ այդ գիշերը բրաջուրեցիք եկան և քշեցին տարան իրանց ոչխարների հօտը... Իշխանաւորներն առանց քննութիւններ կատարելու, թուրքերի խօսքը հալած իւղի տեղ ընդունելով՝ զօրք են ուղարկում դէպի Բրաջուր և, ինչպէս այսօր հաստատապէս տեղեկացանք, զօրքը թուրք ոչխարատէրերի հետ միացած անասելի բռնութիւնների է ենթարկել միանգամայն անմեղ բրաջրեցիներին, որոնց յանցանքը կայանում է գլխաւորապէս նրանում, որ համարձակվել են բաղմանլարցիներից պահանջներ անել:

Ինչպէս երևում է, իշխանութիւնը նեղութիւն չէ յանձն առել ստուգելու թուրքերի գանգատը, նայելու ոչխարի հետքերը, կամ եթէ ոչխարները հայերը տարած լինեն, պահանջէ մնացած գառները, և անպայման հաւատացել են թուրք պրովոկատորների բոլոր ասածներին: Առանց մարգարէ լինելու կարելի է հաստատապէս ասել, որ կանցնի մի քանի օր, թուրքերը հայերին կառաջարկեն «դուք ձեր արդար դատից ձեռք քաշեցէք, մենք էլ մեր գանգատից ձեռք կը քաշենք»:

Վա՜յ նրանց, որոնք չեն ճանաչում թուրքերի հոգեբանութիւնը...

Այս րոպէիս լուր ստացանք, որ Զուռնաբաթ գիւղը խոտ տանող հայ սայլապանների վրա Թօփալհասանլուի մօտ թուրքերի կողմից յարձակումն է եղել. յայտնի չէ թէ մարդկային զոհեր եղե՞լ են թէ ոչ:

Ներքև Ախարի Այիբլուից բերին (հայրը երկու կօզակների հետ) մի հինգ տարեկան գեր երեխայ՝ Շաքար անունով: Երեխան հայերէն խօսել բոլորովին մոռացել է, խօսում է թուրքերէն: Հօրը մեծ դժուարութեամբ է աջողվել երեխուն բաժանելու Եօխարի Այիբլուեցի մաշադի Մուսէիբի տնից, որին երեխան հօր տեղ է ընդունում: Մենք առիթ ունեցանք երեխային խօսեցնելու և սրտամաշ զրուցեամբ հեռացանք: Մաշադի Մուսէիբը ունեցել է երկու կին, որոնցից ունի շատ աղջիկներ, բայց ոչ մի արու զաւակ: Երեխան գիշերները քնելիս է եղել «Նթար» նանի մօտ:

—Ծոցումը:

—Ոչ, կշտին:

—Հօրդ անունն ի՞նչ է:

—Մաշադը Մուսէիբ:

—Մօրդ անունը:

—Նթար:

—Քո անունը:

—Թափտըմ. (գտայ):

—Այս կինը քո ի՞նչն է:

—Իմ մայրս է:

—Այս մարդը:

—Իմ հայրս է:

—Ո՞ւր է Մաշադին:

—Եօխարդա գըլ:

—Սա է լաւ հայր, թէ Մաշադին:

—Մաշադին:

—Վրադ ծածկոց կա՞ր:

—Ոչ, տակիս քեչա կար:

Աւելի սրտաշարժ է նրա գերի տանվելը, դրա համար պատմութիւնը աւելորդ չեմ համարում յայտնել «Մշակի» ընթերցողներին:

Երբ թուրքերը յարձակվում են Բաղաձորի վրա, գիւղացիք ցրվում են շրջակայ ձորերը: Սարգիս Զուլհանեանի ընտանիքին պատահում է մի ծանօթ թուրք և նրանց տանում թագցնում է ծակ քարի լանջում: Ամբողջ գիշերը նրանք մնում են հրացանների ձայների սարսափի տակ: Երբ հասնում է լոյսը, թուրքը տեսնում է իրանցից 2-ը սպանված. նա վերադառնում է հայերի մօտ, ուզում է հրացանապարկ անել բոլոր պատսպարածներին: Զուլհանեանի ընտանիքը բաղկացած է մի պառաւ տատից, իր կնոջից, Թէլլուից, 5 տարեկան Շաքարից ու 2 տարեկան Լևոնից: Գազանացած թուրքը վերադառնալով թագստատեղին՝ յարձակվում է Թէլլուի գրկում գտնվող երկու տարեկան Լևոնի վրա, խլում մօր գրկից ու ոտներից բռնելով՝ շպրտում է ներքևի անդունդը: Ապա հրացանով գնդակահար է անում պառաւ տատին, իսկ ուսից վիրաւորում է Թէլլուին, մէջքից Սարգսին, իսկ փոքրիկ Շաքարը հրաշքով ազատվում է: Սա մօտենում է տատին ու նրա շալի տակին թագ կենում:

Այս բանը նկատում է մաշադի Մուսէիբը, և կարծելով թէ տապալված ամուսինները արդէն մեռած են, երեխայ Շաքարին առնում է իր հետ, տանում Եօխարի Այիբլու:

Այս աստուծոյ պահած գառն է, որ գայլերից ազատ է մնացել և վերադարձել ծնողներին:

Դաշտամիրեան

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՑԻ ԿՐՃԱՏՈՒՄԸ

Ինչպէս հեռագրերից «Մշակի» ընթերցողներին արդէն յայտնի է, մարտի 7-ին բարձրագոյն բեսկրիպտով հրամայված է զինուորական մինիստրին՝ կրճատել զինուորական ծառայութեան ժամանակամիջոցը: Այսուհետև հետևակ զօրքը և հետևակ արտիլերիան նախկին 5 տարւ փոխարէն պէտք է ծառայեն միայն 3 տարի, իսկ ձիաւոր զօրքը և ձիաւոր արտիլերիան — 6 տարւ փոխարէն 4 տարի միայն: Պէտք է ասել, որ հինգ տարվան զինուորական ծառայութեան աննպատակայարմարութիւնը վաղուց արդէն նկատված էր Ռուսաստանում և 1880 թւականից ի վեր առհասարակ զինուորներին պահեստի էին արձակում 4 տարի ծառայելուց յետոյ, բայց դա անվում էր ոչ թէ օրէնսդրական կարգով, այլ իւրաքանչիւր անգամի համար առանձին բարձրագոյն հրաման էր արձակվում: Այժմ դա օրէնք է դառնում, մի շատ ցանկալի ու գովելի օրէնք: Այդ տեսակէտով Ռուսաստանը բաւականին մօտենում է եւրոպական երկրներին, որտեղ զինուորական ծառայութեան ժամանակամիջոցը վաղուց արդէն կրճատված է. օրինակի համար Գերմանիայում 1892 թւականից, իսկ Ֆրանսիայում 1905 թւից հետևակ զօրքը և արտիլերիան միայն երկու տարի են ծառայում: Ի նկատի առնելով ռուս ժողովրդի անգրագիտութիւնն ու տգիտութիւնը, պէտք է ասել, որ երեք տարւայ զինուորական ծառայութիւնը շատ չէ, թէև ինքնըստինքեան ամբողջ երեք տարի հարիւր հազարաւոր երիտասարդներին աշխատանքից կտրելն ու կազարմաներում երկրի համար ոչ արդիւնաբեր աշխատանքով զբաղեցնելը դեռ շատ մեծ բան է:

Նոյն բեսկրիպտով զինուորական մինիստրին հրամայված է մի օրինագիծ պատրաստել պահեստի զօրքերին երկու կարգի բաժանել, որպէսզի պատերազմի ժամանակ այսուհետև աւելի երիտասարդներով լրացվի առաջաւոր բանակը, իսկ աւելի ծերերը arrière garde-ում մնան:

Այս վերջին կէտը պարզ հետևանք է վերջին Մանջուրիայի պատերազմի փորձառութեան, երբ շարունակ ծեր զինուորներն էին ուղարկում բանակը լրացնելու և միշտ բոլորովին անպէտք էին դուրս գալիս, իսկ աւելի երիտասարդները տանն էին մնում և իրանց հերթին էին սպասում:

Բեսկրիպտի մի այլ կարևոր կէտն էլ այն է, որ զինուորները այսուհետև պէտք է ազատվեն իրանց հագուստեղէնը, կօշիկները պատրաստելու, կարկատելու և այլն հոգսից, որպէսզի աւելի շատ ժամանակ ունենան բուն զինուորական զբաղմունքներով պարապելու: Ի դէպ է ասել, որ եւրոպական երկրներում այս բանն էլ վաղուց արդէն վերացված է. օրինակի համար Ֆրանսիայում զինուորների տնտեսական աշխատութիւնները տալիս են զինուորական բանտերում կալանաւորվածներին կատարելու:

Կրկնում ենք, բեսկրիպտի բոլոր կէտերը շատ ցանկալի ու չափազանց գովելի են, սակայն ներկայ ռէակցիայի ժամանակներում, երբ կառավարութիւնը ամեն տեսակ ջանքեր է թափում խեղդել, ոչնչացնել հոկտեմբերի 17-ի մանիֆեստով տրված ու խոստացված բարենորոգումները, փոքր ինչ անհասկանալի է դառնում կառավարութեան այդ աստիճան քնքոյշ հոգատարութիւնը դէպի զօրքը: Եւ մարդ ակամայից հարցնում է՝ արդեօք սա էլ մի տեսակ կաշառք չէ՞, որով կառավարութիւնը կամենում է զօրքին աւելի լաւ տրամադրել դէպի ինքը: Բ.

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Մարտի 16-ին Բագուի նահանգական դատարանում սկսվեց 1905 թւի փետրվարի 6—9 անցքերի ժամանակ կատարված գործերի քննութիւնը:

Նիստը բացվեց ժամի 11½-ին:

Թէև քաղաքացիական պահանջ յարուցողները՝ տ. տ. Ադամեանը և Բէլուբէկեանը խնդրեցին գործի քննութիւնը յետաձգել վկաներից մի քանիսի չը գալու և երդուեալ-հաւատարմատար Դօլուխանեանի հիւանդութեան պատճառով, որը նրանց գործը պաշտպանում է և վիրաւորված էր գործի քննութեան հէնց նախորդ օրը, մարտի 15-ին, այնուամենայնիւ դատարանը կարելի համարեց քննել գործը:

Յետաձգելով քննութեան տեղեկութիւնը յաջորդ անգամվայ, առ այժմ յիշատակենք գործի էութիւնը՝ մեղադրական ակտը:

«Վերջին 3—4 տարիներս Բագու քաղաքի միմեանց հետ վաղուց հաշտ ապրող մուսուլման և հայ ազգաբնակութեան յարաբերութիւնների մէջ որոշ չափով պառակտում ընկաւ և թէև դրա պատճառների մասին հարցաքննութիւնների ժամանակ թէ մուսուլմանները և թէ հայերը տարբեր բացատրութիւններ տուին, այնուամենայնիւ պառակտման փաստը հաստատում են երկու կողմերն էլ: Բացի դրանից 1904 թւի սկզբներում Բագու քաղաքում տեղի ունեցան մի քանի թուրքերի սպանութիւններ, որոնց մասին թուրքերի մէջ լուրեր էին պտտում, որ իբր թէ այդ սպանութիւնները կատարել է վաճառական Լալայեանների և Ջախմախսազեանների Շուշուց յատուկ բերել տուած Մինաս Ենգոյեանց անունով մէկը՝ վրէժ առնելու նպատակով Ջախմախսազովի որդուն և Լալայեվի կնոջը անպատվող թուրքերից: Մի քանի ժամանակից յետոյ Ենգոյեանցը սպանվեց բագուեցի Բալա-Աղա-Մաշադի-Մամէդ-Րիզա-օղլուի կողմից, իսկ վերջինս էլ սպանվեց իրան ուղեկցող հայ զինուորներից. վերջիններիս ասելով այն ժամանակ, երբ քննիչի մօտից տանում էին բանտը, ուր նա բանտարկված էր Ենգոյեանցի սպանութեան համար, Բալա-Աղան փորձեց փախչել, իսկ թուրքերի մէջ լուր էր տարածվել, որ Բալա-Աղայի սպանութիւնը կատարված է հայերի կաշառմամբ: Այդ բոլոր հանգամանքները հայերի ու թուրքերի մէջ փոխադարձ գայրոյթ առաջացրին և այնքան նկատելի, որ վկայ Դօլուխանեանի ասելով, դեռ ընդհարումից առաջ հայոց վարդապետը դիմեց ղադիին խնդրելով՝ խաղաղացնել թուրքերին, իսկ Ֆաթուլի բէկ Վազիրովի ասելով փետրվարի 6-ին պէտք է կայանար մուսուլման և հայ պատուելիների խորհրդակցութիւնը քննելու այն հարցը, թէ ինչպէս խաղաղացնել հայերին և մուսուլմաններին, սակայն չը կայացան հէնց այդ օրը ընդհարում սկսվելու պատճառով: Ընդհարումը հայերի ու թուրքերի մէջ սկսվեց հետևեալ հանգամանքների մէջ:

Փետրվարի 6-ին, ցերեկը, մօտաւորապէս ժամի 12-ին, Պարապետի վրա բռնեցին հայերը Աղա-Րզա Բաբայեվին, Բագու քաղաքի հարուստ և ազդեցիկ թուրքերից մէկին, կասկածելով, որ նա է կրակել անցնող հայ զինուորի վրա: Երբ օկոլօդչի Ադոլֆ Նոտեբեց Բաբայեվին կառքի մէջ ոստիկանական բաժանմունքը տանելու և արձանագրութիւն կազմելու համար, կառքը շրջապատող մի խումբ հայերի միջից ատրճանակ պարպվեց Բաբայեվի վրա, և երբ վերջինս դուրս թռչելով կառքից սկսեց փախչել դէպի «Գրանդ-օտել» հիւրանոցը, այն ժամանակ հայերը հետամուտ եղան նրան և ատրճանակի հարուածներով սպանեցին: Այդ սպանութիւնն էր, ըստ երևոյթին, ամենամերձաւոր պատճառը յաջորդող ընդհարումների մուսուլմանների ու հայերի մէջ, և արդէն միւս օրը առաւօտեան, այսինքն, փետրվարի 7-ին սպանված էին 22 հայ և 2 թուրք և վիրաւորված 13 հայ և 9 թուրք: Փետրվարի 7-ին առաւօտեան ժամի 9-ից վերսկսվեց հրացանաձգութիւնը հայերի և թուրքերի մէջ. բացի բազմաթիւ վիրաւորներ ու սպանվածներ տալուց, այդ օրը սկսեցին մագազինների, տների ու բնակարանների ջարդերն ու թալանները, կողոպտվեցին հայերի 15 առևտրական ու արդիւնաբերական հիմնարկութիւնները և 7 բնակարաններ և երկու մագազին էլ թուրքերի:

Հրացանաձգութիւնը, որ չէր ընդհատվել ամբողջ գիշերը՝ առաւօտեան ժամի 8-ից սաստկացաւ մեծ ույժով. այդ օրը կողոպտվեցին հայերի 46 արդիւնաբերական և առևտրական հիմնարկութիւններ ու 17 բնակարաններ, իսկ թուրքերից 18 հատ առևտրա-արդիւնաբերական հիմնարկութիւններ: Իսկ սպանվածների և վիրաւորվածների թիւը բազմաթիւ էին երկու կողմից էլ:

Այդ միևնոյն օրը հրդեհեցին և կողոպտեցին Բաբաջանովի և տ. Լազարեանի տները, որոնց աւերակների տակ յետոյ գտնվեցին 27 այրված դիակներ գլխաւորապէս այդ տներում բնակվող հայերի: Փետրվարի 8-ին գիշերը և յաջորդ առաւօտը ժամի 9-ին սպանութիւնները և թալանները շարունակվեցին, կողոպտվեցին հայերի 15 առևտրական-արդիւնաբերական հիմնարկութիւններ և 9 բնակարաններ, և թուրքերի 10 առևտրական և արդիւնաբերական հիմնարկութիւններ այդ մի և նոյն օրն էլ յարձակման ենթարկվեցին Յովսէփ Ադամովի տան բնակիչները, հետևեալ հանգամանքների մէջ. վերջինիս տունը գտնվում էր Վորոնցովսկի և Կանիթափինսկի փողոցների անկիւնում Բագու քաղաքի մէջ: Բացի տնատէր Ադամեանից, նրա կին Աննայից և որդի Սիմէօնից, նոյն տանը բնակարան էին վարձել Սիմէօն Շամհալեանցը իր կին Սօֆիայի և որդու Ներսէսի հետ, Եգոր Բէլլուբէկեանը իր կին Սօֆիայի և մանկահասակ Վառվառէ աղջկայ հետ, Արգար Դաւթեանը իր կին Եղիսաբէթի հետ և Միքայէլ Ղարագեօզեանցը: Փետրվարի 7-ին և 8-ին նրանց տանն էին մօտենում թուրքերը, գընդակներ էին արձակում, ծեծում էին լուսամուտները, բայց տան վրա չէին յարձակվում: Փետրվարի 9-ին առաւօտը բակի դուռը յամառաբար սկսեցին բաղխել և երբ Աննա Ադամովը դուռը բանալով, հարցրեց բաղխող թուրքերին, թէ ի՞նչ են ուզում, նրանք յայտնեցին, որ մտադիր են խուզարկութիւն կատարելու նրանց մօտ զէնք որոնելու նպատակով: Այդ ասելով ներս խուժեցին 39 թուրքեր, որոնք տանը զէնք չը գտնելով, դուրս եկան գնացին: Այդ խուզարկողների թւումն էր գտնվում Ադամովներին ծանօթ կառապան Կուլամ Ալի Աշրաֆ Հաջի Մահմուդ-օղլին և Հիւսէյն Ալի Մաշադի Ղուրբան-օղլին, որոնք հանգստացնում էին տան բնակիչներին, խոստանալով նրանց պաշտպանել: Սակայն, նրանք քիչ յետոյ հեռացան, իսկ մի հինգ րոպէից յետոյ տան դռները և պատուհանները կոտրելով, ներս խուժեց թուրքերի մեծ բազմութիւն և սկսեց յափշտակել Ադամեանի բնակարանի գոյքը: Տան բոլոր բնակիչները պահվեցին Բէլլուբէկովների բնակարանում և այնտեղից դիտում էին թալանին, որի ժամանակ Աննա Ադամեանը և Սօֆիա Բէլլուբէկեանը գոյքը յափշտակողների մէջ ճանաչել են իրանց յայտնի և հարևանութեամբ ապրող կառապան Մանսուր Ամիր-օղլուին: Կողոպտելով Ադամեանների գոյքը, թալանիչները անցան Բէլլուբէկեանների բնակարանը, պահանջեցին իրանց յանձնել թագնված տղամարդկանց և, Սօֆիա Բէլլուբէկեանի սենեակում, սպանեցին Յովսէփ Ադամեանին, Եգոր Բէլլուբէկեանին, Միքայէլ Ղարագեօզեանցին, Արգար Դաւթեանցին, Սիմէօն Շամհալեանցին և Սիմէօն Ադամեանին, վերջինիս այն ժամանակ, երբ, դուրս վազելով սենեակից, ուզում էր թագնվել արտաքնոցում. մի և նոյն ժամանակ վիրաւորվեցին Սօֆիա Բէլլուբէկեանը ոտից գնդակով, նրա մանկահասակ աղջիկը Վառվառէն ձեռքից խանջալով, Եղիսաբէթ Դաւթեանը ուսից խանջալով և գնդակով՝ ազդրից. առաջինը այն ժամանակ, երբ իր հագուստով ծածկելով պաշտպանում էր մարդասպաններից իր ամուսին Եգորին, իսկ երկրորդը, երևի, պատահաբար այն ժամանակ, երբ մարդասպանները հարուածում էին հօրը խանջալներով, որը բռնել էր նրան ձեռքերի վրա: Թէև սպանվածների դիակները բաց անել քննութեան համար անհնար էր, այնուամենայնիւ սպանութեան ականատես վկան Եգոր Բէլլուբէկեանի 12 տարեկան որդին, Տիգրանը, մի և նոյն ժամանակ յետոյ հանգուցեալներին թաղող Գրիգոր Ադամեանը վկայում էին, որ Եգոր Բէլլուբէկեանին խփել էին 7 գնդակի վէրքեր տալով կողքին, չորս խանջալի հարուածներ աջ ձեռքին, որի ժամանակ կտրվել է ձախ ձեռքի երկու մատը և գանգի վերևի մասը: Սիմէօն Շամհալեանցին վիրաւորած են եղել երկու գնդակի վէրքեր տալով կրծքին, կտրված է աջ ձեռքը և ճեղքված գլուխը, Յովսէփ Ադամեանը ստացել է գնդակի հինգ վէրք կրծքին և երկուսը աջ ոտին. Միքայէլ Ղարագեօզեանը ունեցել է չորս գնդակի վէրք աջ կողքին և խանջալի 5 հարուածներ կրծքին և փորին. Սիմէօն Ադամեանը ստացել է 6 վէրք, 4 փորի մասում, իսկ երկուսը պարանոցի վրա: Ամբողջ տնամէջը թէ Ադամեանի և թէ բնակիչների կողոպտել տարել էին: Վերոյիշեալ դէպքի ականատեսներ էին, բացի իրանց ցոյց տուած վկաներից, Մարիամ Շագիսանեանց, Եղիսաբէթ Դաւթեանց, Ներսէս և Սօֆիա Շամհալեանց:

(Կը շարունակվի)

ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻՑ

Բօստօնի «Արաքս» թերթի մէջ կարդում ենք. «Կովկասի տառապելոց ի նպաստ ծանուցեալ ժողովը տեղի ունեցաւ փետր. 24-ին ի Նիւ-Եօրք, և հանգանակութեան գումարը նոյն իրիկունը հասաւ 1,500 տոլարի, և յոյս կայ որ 2000-ի բարձրանայ նոր յաւելումներով:

Այս գումարին 1000-ը իբր 10 ազգայիններ խոշորկեկ նուէրներով հայթայթեցին, ու 500-ը ելաւ հասարակ գործաւորներու և արհեստաւորներու քսակէն:

Այս արդիւնքը բաւական գոհացուցիչ պէտք է նկատուի, եթէ յիշենք թէ Պօստոնի մէջ եղած նմանօրինակ ժողովի մը հանգանակութեան գումարը 150 տոլարի համեստ սահմանէն անդին անցած չէր:

Նիւ-Եօրքի հանգանակութիւնը աւելի խոշոր համեմատութիւններ պիտի կրնար ունենալ, եթէ քանի մը աննպաստ պարագաներ տեղի չը ըլլային: Դժբաղդաբար ժողովը անճապարանոց կարգադրուեցաւ: Նախաձեռն եղաւ Գաղթային Խորհուրդը, բայց թելադրութեան մը անսալով՝ քանի մը աւուր մէջ ծանուցանել և հաւաքոյթը սարքել փութաց, անանկ որ ժողովուրդին մէկ մասը չիմացաւ, մանաւանդ շրջակայից հայերը, ինչպէս Փէթէրսընի, Գօլէճ Փօյնթի են: Հաւաքումը ֆրանսական եկեղեցին մէջ եղաւ, գեղեցիկ սրահ մը, բայց ներկայից թիւը 200-էն աւելի չէր: Ասանկ արտակարգ առթիւ ամօթ է ասանկ պզտիկ ժողով մը ունենալ Նիւ-Եօրքի պէս տեղ մը, ուր 2000 կը հաշուի հայոց թիւը: Ներկայք մեծ առատաձեռնութեամբ տուին իրենց դրամները, և կը հաւատամ թէ շատերը իրենց կարողութենէն աւելի տուին: Ասոնք մեծ շնորհակալութեան ու գովեստի արժանի են և տեղի չկար ամէնուն այն յանդիմանութեան, որ ատենախօսներէն մէկուն կողմէն անոնց ուղղուեցաւ, իբր թէ կծծի կը վարուէին: Այս սխալը յառաջ եկաւ այն պարագայէն, որ կարծուեցաւ թէ 200 հոգին պէտք է 1000 հոգիի տալիքը տային»:

—Նոյն թերթի մէջ կարդում ենք հետևեալ բողոքը 120 ստորագրութիւն կրող: «Ամերիկահայ գիտակից, անկեղծ ու զգայուն տարրին, հայ եկեղեցւոյն ու հայ անունին նախանձախնդիր եղող անհատներուն ուշադրութիւնը կը հրաւիրենք Պօսթօն հրատարակուող «Ձայն Հայրենեաց»-ի 380 թուով հրատարակուած խմբագրականին վրայ, որուն մէջ շարաւոտ լեզու մը գործածուած կը տեսնենք յանձին Ամերիկահայոց առաջնորդ Գեր. Յով. արքեպ. Սարաճեանի դէմ, և այս կերպով Հայ եկեղեցւոյ նուիրական անունը արատաւորուած՝ անպատշաճ տողերով: Ատենէ մը ի վեր էր որ այս խմբակին վերաբերող մարդոց կողմէ կարգ մը աղմկալի ու խլացուցիչ պոռոտախօսութիւններ կ'ըլլային. ասոնց ցարդ կարևորութիւն չը տուինք, Սակայն այս մարդիկը քաջալերուած իրենց այս յանդգնութենէն, իրենց թերթին վերջին թիւով՝ Ամերիկահայոց առաջնորդը «Ասիացի Սօֆթա» (մօլլա) անուանելու չափ առաջ կ'երթան:

Ժամանակ է ուրեմն, ո՛վ տարագիր Հայեր, դուք որ Հայաստանի սրբանուէր հողին վրայ, բռնակալ թուրքին անողոք սուրին ու ճնշումներուն տակ նոյնիսկ հայ անունը ու հայ եկեղեցիին պատիւը պաշտպանելու նախանձախնդիր գտնուած էք, ժամանակ է որ չի թողուք որ հայ եկեղեցւոյ անունը՝ որ հազարաւոր զոհերու արիւնովը նուիրագործուած է, ու անոր սքեմաւոր պաշտօնէութեան պատիւը՝ ոտնակոխ ընեն:

—Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը խնդրած է Զմիւռնիոյ առաջնորդարանէն հանգանակութիւն կատարել տեղւոյն ազգայնոց մէջ, ի նպաստ Կիլիկիոյ կարօտ թեմերուն:

—Վանէն ստացուած մասնաւոր նամակներէ կիմանանք թէ կոտորածի երկիւղ կը տիրէ քաղաքին մէջ, և Կիր—Դար թաղը, ուր հայեր և թուրքեր խառն կը բնակին, կը պարպուի Հայերէ, որոնք առջին դէպքերէն կրած անհուն կորուստներէն խրատուած ըլլալով այս անգամ կը քաշուին զուտ հայաբնակ թաղերը:

—«Իրաւունք» թերթի մէջ կարդում ենք. Վարդանանց տօնի առթիւ Գահիրէի Լսարան-Ընթերցատան մէջ երեկոյթ մը սարքուած էր, և նոյն օրուան նախագահ ընտրուած էր Գեր. Տ. Եզնիկ Սրբազան Ապահունի և օրուան բանախօս Տիար Տօք. Տաղաւարեան: Հանդէսին ներկայ էին բազմաթիւ նշանաւոր հայ անձնաւորութիւններ և մի քանի օտարներ, որոնք ժամանակէն իսկ առաջ փութացած էին հանդիսավայրը:

Սրբազան նախագահը որոշեալ ժամուն բեմ ելաւ, նիւթ ունենալով օրուան տօնը և Լսարան-Ընթերցատան պաշտօնը: Նորին սրբազնութիւնը Վարդանանց քաջագործութիւնը յիշատակելէ վերջ, հարևանցի կերպով նկարագրեց նաև իւր կրած տառապանքները թիւրք բռնակալութեան ներքև և իւր գոհունակութիւնը յայտնեց որ այժմ իւր եղբայրներուն քով գտնուելով, առիթը կունենայ այսպիսի հանդէսի ներկայ գտնուիլ. ապա ակնարկեց նաև Գահիրէի հայ վաճառականներուն և թելադրեց որ հայ լեզուին, գրականութեան և պատմութեան նախանձախնդիր ըլլան: (Բուռն ծափահարութիւն):

Սրբազանէն յետոյ բեմ բարձրացաւ Պ. Ղևոնդ Փաշայեան, որ եռանդով և ճարպիկ շարժուձևերով արտասանեց «Սիամանթօի» հայորդիներուն մէկ կտորը, որն որ արժանացաւ ծափահարութեան:

Ապա երևցաւ տօք. Տաղաւարեան, որ հանդիսականներէն ողջունուեցաւ երկար և սրտեռանդ ծափահարութեամբ: Յարգելի բանախօսին նիւթն էր «Հայ ազգին պահպանման պայմանները». նախ համառօտիւ նկարագրեց Վարդանի և իւր ընկերներուն կատարած վսեմ գործը, և ըսաւ թէ սոյն մեծ տօնախմբութիւնը ոչ թէ միայն հայ ազգի համար է, այլ միջազգային տօն կը համարուի, որովհետև օտարները մինչև իսկ հիացած են անոնց սխրագործութիւններու վրայ, և անոնց ըստացած մեծ ծառայութեանը դէպի ընդհանուր մարդկութիւնը: Տօքթորը գծեց նաև նոյն ժամանակուան Հայաստանի սահմանները ու հայոց բարեկամները ու թշնամիները, յիշատակեց նաև հայոց մեծ թագաւորներու կատարած յաղթութիւններն: Յետոյ անցաւ հայ գրականութեան և լեզուին և ցաւ յայտնեց, որ մեր մէջ շատ ազգայիններ չեն գործածեր իրենց բուն մայրենի լեզուն և գերադաս կը համարեն ուրիշ օտար լեզուներ. մասնաւորապէս նաև հայ լեզուին ճոխութիւնը և իւր համբաւը օտար ազգաց առջև. օրինակ տալով ըսաւ թէ, վերջերս նշանաւոր Անգղիացի գիտունի մը հետ երբ տեսնուեցայ, ինձ յայտնեց իւր անսահման համակրանքը հայ լեզուին համար: Տաղանդաւոր և պերճախօս ատենաբանը երկարօրէն խօսելէ վերջ, իւր բանախօսութիւնը վերջացուց յորդորելով հայ ծնողները որ ջանք չը խնայեն իրենց զաւակներուն ուսուցանելու հայ լեզուն, գրականութիւնն ու պատմութիւնը և յիշեն միշտ իրենց պարտականութիւնը հանդէպ իրենց ազգին:

Ապա Լսարան-Ընթերցատան վարչութեան ատենադպիրը բեմ ելլելով նախ շնորհակալութիւն յայտնեց նախագահ Սրբազանին: Տօք. Տաղաւարեանին և միւս պարոններուն:

Ապա առաջարկեց ներկայ խուռն բազմութեան Միացեալ Նահանգաց նախագահին Մ. Ռօզվէլթին հեռագիր մը ղրկել Գահիրէբնակ հայութեան կողմէն: Այս առաջարկը կրկնեց նաև Գեր. Եզնիկ Սրբազանը, ուստի միաձայնութեամբ որոշուեցաւ հեռագրել Մ. Ռօզվէլթին որ Լահէյի Վեհաժողովին հաճի ներկայացնել Հայաստանի դատը:

ԲԵՄԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Մայրաքաղաքի Նոր թատրոնի դահլիճում մարտի 10-ին տեղի ունեցաւ բեմական գործիչների համառուսական դաշնակցութեան սահմանադիր համաժողովը: Թատրոնում հաւաքվեցին աւելի քան 1500 մարդ: Ժողովին մասնակցում էին Ռուսաստանի զանազան քաղաքներից եկած բազմաթիւ արտիստներ: Նախագահում էր Վ. Մարկովսկի:

Լ. Ժդանով դիմեց ներկայ եղողներին մի ճառով, որի մէջ մատնացոյց անելով ներկայումս բեմական գործիչների դաշնակցութիւն հիմնելու անհրաժեշտութեան վրա, առաջարկեց քննել և մշակել դաշնակցութեան կանոնադրութիւնը և ընտրել նրա ժամանակաւոր վարչութիւնը: Կանոնադրութիւնը քննելու ժամանակ, տաք վիճաբանութեան առարկայ դարձաւ այն հարցը, թէ արդեօք դաշնակցութիւնը պէտք է անջատվի՞ ռուսական կայսերական թատրոնական ընկերութիւնից, թէ պէտք է նրա մի բաժանմունքը դառնայ:

Ժողովը որոշեց հիմնել բեմական գործիչների դաշնակցութիւնը թատրոնական ընկերութեան կից, կատարեալ ինքնավարութեան հիմունքով: Դաշնակցութիւնը նպատակ ունի բարձրացնել թատրոնական գործը Ռուսաստանում և բարւոքել բեմական գործիչների դրութիւնը: Աշխատելով բնական յարաբերութիւններ հաստատել աշխատանքի և կապիտալի մէջ, նա կը սահմանէ բանւորական ժամերի նորման և հոգ կը տանէ աշխատանքի առողջապահական և սանիտարական պայմանների մասին: Վճռված է դաշնակցութեան կից հաստատել ընկերական դատարան և միջնորդ դատարան: Բացի դրանից, նախագծված են դաշնակցութեան անդամների մտաւոր և հոգեկան զարգացման միջոցները, այսինքն պէտք է բանալ դպրոցներ, կուրսեր, ընթերցարաններ, թատրոններ, հրատարակել մասնագիտական օրգաններ և այլն: Ժողովը որոշեց հիմնել դաշնակցութեան կից խնայողական արկղներ, փոխատու, ապահովագրութեան ընկերութիւններ և այլն:

Մեծ վիճաբանութիւն յարուցեց այն հարցը թէ պէ՞տք է արդեօք ընդունել դաշնակցութեան մէջ անտրեպրենէօրներին, որոնք ձեռնարկողներ են հանդիսանում թատրոնական աշխատաւորների վերաբերմամբ: Ժողովը որոշեց ընդունել բոլոր առհասարակ բեմական գործիչներին, այսինքն այն բոլոր անձանց, որոնք արհեստով պատկանում են թատրոնին և մասնակցում են բեմական աշխատանքին։ Այդպիսով դաշնակցութեան մէջ կարող են մտնել թատրոնական հիւսներ, դեկորացիաներ շինող բանուորներ, դերձակներ և վարսաւիրներ։

ԵՐԿՐԱՇԱՐԺ ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Կ. Պոլսից ստացված հայ թերթերը հետեւեալ տեղեկութիւններն են հաղորդում Թիւրքա-Հայաստանի զանազան տեղերում պատահած երկրաշարժների մասին։

Մալաթիայէն գրւում է Պատրիարքարան.—Նոյ. 21 թուակիր հեռագրով հաղորդած են քաղաքին մէջ երկրաշարժ պատահած ըլլալը։ Առնուած վերջին տեղեկութեանց նայելով, այն օրէն ի վեր ցնցումները կը շարունակուին, ժողովուրդը պարտէզներու և բացօթեայ վրաններու մէջ ժամանակ կ'անցնէ։ Կարգ մը տուներ վնասուած ըլլալով անբնակելի դարձած են։ Առաջնորդը անձամբ այցելեց և զօրակցեց ժողովուրդը։ Հանրային շէնքեր վնասուած չեն։ Բացի Հիւսնիմանսուրի եկեղեցիէն, որ անգործածելի դարձած է, քաղաքին մերձակայ գիւղերէն ալ երկրաշարժի լուրեր կը հասնին, սակայն տակաւին վնաս կա՞յ կամ ոչ, ստուգուած չէ։

Խարբերդէն.—Նոյ. 21-ի Բշ օր, ցերեկուան ժամը 5-ին երկրաշարժ մը տեղի ունեցաւ։ Առաջնորդը Թադէմ գիւղը կը գտնուէր՝ որ կեդրոնէն 3 ժամ հեռու, 250 տնւոր հայաբնակ գիւղ մըն է։ Երկրաշարժին պատճառած յանկարծական խուճապին մէջ առաջնորդը հազիւ հազ յաջողեցաւ ինքզինքը փողոց նետել, ուրկէ տեսաւ իր բնակած սենեակը փլաւ։ Առաջին սոսկալի ցնցումին յաջորդեցին ուրիշ երկու ցնցումներ եւս, որոնք առաջինին պէս սաստիկ չէին։ Թադէմ գիւղը բաւական վնասուած է. 15 տուն քանդուած և մնացածները աւել կամ նուազ նոյն բաղդին հանդիպեցան։ Առաջնորդը արկածեալներուն քով փութալով քաջալերեց զանոնք։ Առաջնորդը անմիջապէս ճամբայ ելաւ Մեզրէ դառնալու համար, հանդիպեցաւ Սօրսորի վանքը և գիւղը, որոնց շէնքերուն վրայ կը տեսնուին երկրաշարժի հետքերը։ Առաջնորդարան հասնելով՝ իսկոյն այցելեց Վալիին. Կուսակալին և նկարագրեց գիւղերու վիճակը երկրաշարժի երեսէն։ Երկրաշարժը նոյն ուժգնութեամբ տեղի ունեցաւ նաև Մեզրէ և շրջականերու մէջ։ Ամէնէն աւելի վնասուեցան Քեսէրիկ, Մօրէնիկ, Բէրչէնճ, Խօյլու գիւղերը։ Առաջնորդը այցելեց այս գիւղերն ալ և հոգեորապէս մխիթարեց հասարակութիւնը։ Մօրէնիկի, Քեսէրիկի և Խօյլուի եկեղեցիները բոլորովին անգործածելի դարձած են. շէնքերը գրեթէ անբնակելի ըլլալով, ժողովուրդը բացօթեայ տեղեր հաստատուած է։ Օդերը տակաւին լաւ կ'երթան և դեռ ձիւն տեղացած չէ։ Նոյնպէս Շիրաւէ և Այվօսի կողմերն ալ վնասներ կան։ Երկրաշարժի ցնցումները կը շարունակուին տակաւին պարբերաբար. ամենուրեք հսկումներ կը կատարուին և ժողովուրդը խանդաղատ ներկայ կը գտնուի։ Բարեխնամ կառավարութիւնը անմիջապէս արկածեալներուն օգնութեան հասաւ։

Տիապէքիրէն.—Նոյ. 21-ին, երեքշաբթի օրը, ցերեկուան ժամը 5-ին երկրաշարժի ցնցում մը պատահեցաւ քաղաքիս մէջ՝ մէկ երկվայրկեան տեւողութեամբ. շատերը տեսարկեցան ցնցումէն, բայց գոհութիւն Տեառն, որ և է ծանր վնաս չէ պատահած։

ԴՐԱՄԱՏԻՔԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆԻՍՏԸ

Կիրակի, մարտի 19-ին, Արտիստիքական ընկերութեան դահլիճում կայացաւ Հայոց Դրամատիքական ընկերութեան նիստը։ Վարչութեան փոխ-նախագահ Հ. Առաքելեան բանալով նիստը, յայտնեց, որ ներկայ ժողովը շարունակութիւն է անցեալ նոյեմբերին կայացած ժողովի, որ չը կարողացաւ աւարտել իր պարապմունքները և առաջարկեց ընտրել ընդհանուր ժողովի նախագահ և քարտուղար։ Ընտրվեցին նախագահ — Ալեք. Բալանթար և քարտուղար — Տ. Զաւէն։

Վարչութեան գանձապահ Ալ. Խատիսեան կարդաց միայն ի տեղեկութիւն ընդհանուր ժողովի անցեալ 1905/6 թատրոնական սեզոնի հաշիւը (բուն և մանրամասն հաշիւը կը ներկայացնվի հերթական ընդհանուր ժողովին, որ կայանալու է մայիսին)։ Այդ հաշուից երևաց, որ ընկերութիւնը անցեալ տարի կարողացել է միայն 10 ներկայացումն տալ, որովհետև հայ-թուրքական ընդհարումների և այլ աղէտների պատճառով շարունակել ներկայացումները անհնարին էր, բայց ստիպված է եղել ծախքեր անել, տալով դերասաններին $3\frac{1}{2}$ ամսվայ ռոճիկ և այլն։ Այդ պատճառներով ընկերութիւնը ունեցել է եկամուտ մինչև 1655 ր. 52 կ., իսկ ծախք—11089 ր. 63 կոպ. ուրեմն դեֆիցիտ—9434 ր. 11 կ., որ ծածկված է Մանթաշեանի 5000 րուբլի նուէրով և անձեռնմխելի գումարով, փոխարինաբար։

Առաջիկայ գործունէութեան համար, ժողովականները հետևեալ ցուցմունքները արին։

Շիրինեան առաջարկեց, որ վերացնվի Դրամ. ընկերութեան բարեգործական նկարագիրը, որ ընկերութեան անդամները իրաւունք ունենան օգտվելու իրանց 5 ր. անդամավճարի փոխարէն թատրոնական ներկայացումներից նոյն չափով։ Դա կը լինէր մի միջոց բազմացնելու անդամներին, շահագրգռելու աւելի մեծ թւով անձերի ընկերութեան գործերով։ Երկրորդ՝ ընդունել սկզբունքով դերասաններին նոյնպէս շահագրգռելու ձևը, տալով նրանց ռոճիկը 50% կանխիկ փողով և 50%-ը ռոմաշներով։ Երրորդ՝ մտցնել վարչութեան ժողովի մէջ դերասանների կողմից լիազօր։ Չորրորդ՝ տալ ներկայացումներ Զատկից յետոյ։

Դօրղանեան, Բաստամեան, Աբրահամեան, Պետրոսեան նկատելով, որ դերասանները առանց այն էլ բաւականաչափ ապահովված չեն, գտնում էին Շիրինեանի առաջարկը՝ դերասանների մասին, անընդունելի և աննպատակայարմար։ Տալ դերասանների ռոճիկի մի մասը ներկայացումներից գոյացած մնացքի գումարից, նշանակում է ռիսկի ենթարկել նրանց արդէն անբաւարար ռոճիկը, որովհետև մեր մէջ թատրոնը ունենալով մի դուռ կրթական հաստատութեան բնաւորութիւն, չը կազմելով անյետաձգելի, անհրաժեշտ պահանջ, կարելի է վտանգաւոր պնդել, որ դերասանները միայն կը վնասվեն այդ կարգադրութեամբ։

Տ. Յովհաննիսեան, վարչութեան անդամ, ընդունեց անդամներին շահագրգռելու սկզբունքը, այսինքն տալ նրանց իրաւունք օգտվելու ներկայացումներից իրանց անդամավճարների արժէքի չափով, բայց դերասանների հարցի մասին արեց վերապահումներ։ Պէտք էր ոչ թէ դեղչել և ռիսկի ենթարկել դերասանների ռոճիկը, այլ ընդհակառակը, եթէ հնարաւոր է, յաւելացնել նրանց ներկայացումների արդիւնքից որոշ տոկոս։ Իսկ ինչ վերաբերում է դերասանների լիազօր ունենալուն վարչութեան կազմի մէջ, ինչպէս և Զատկից յետոյ ներկայացումներ տալուն, կարելի է ընդունել առաջին առաջարկը, իսկ երկրորդը այն պայմանով, որ ներկայացումները տեղի ունենան Հաւլաբարում և ոչ Արտիստականում, որովհետև ոչ բաւականաչափ դերասանական ույժ կայ այժմ և ոչ էլ յոյս աջողութեան։

Շահիկեան առաջարկեց միանուագ նպաստ տալ դերասաններին և ներկայացումների գործը, իբր օգուտով և վնասով, թողնել դերասաններին։

Ժողովը չընդունեց այդ առաջարկը։

Այնուհետև ժողովը զբաղվեց օրակարգի հարցերով։ Պէտք էր ընտրել պաշտօնավարութեան պայմանաժամը լրանալու պատճառով, վարչութեան կազմից դուրս եկող երեք անդամի, իշխանուհի Մ. Թումանեանի, բժ. Ա. Խատիսեանի և երդուեալ հաւատարմատար Տ. Յովհաննիսեանի տեղ նոր անդամներ, ինչպէս և Ծատուրեանի, Քափանակեանի և Պ. Դոլուխանեանի փոխարէն երեք նոր փոխանդամներ, ինչպէս և Մակարեան և Մելիք-Այվազեան մրցանակաբաշխութեան յանձնաժողովի նոր անդամներ։

Տ. Յովհաննիսեան հրաժարվեց քուէարկվելուց, իբրև վարչութեան անդամ։

Ընտրվեցին վարչութեան անդամներ հետևեալները, որոնց առաջ ենք բերում իրանց ստացած ձայների կարգով. Ալ. Խատիսեան, իշխ. Թումանեան և Յուրինեան. փոխ-անդամներ՝ պ. Կարա-Մուրզա, Ղորղանեան, բժ. Մուրադեան. մրցանակաբաշխութեան յանձնաժողովի անդամներ՝ Տ. Յովհաննիսեան, դերասան Պետրոսեան, Ա. Աթմաջեան, Քափանակեան, Տ. Զաւէն, Զարար։

ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԿ. ԺՈՂՈՎԸ

Կիրակի, մարտի 19-ին, նշանակված էր Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան ընդհանուր ժողովը, ընկերութեան արհեստանոցում։ Ժողովի պարապման առարկաներն էին ընկերութեան 1905 թ. հաշւի, 1906 թ. նախահաշւի քննութիւնը և վաւերացումը, վարչական անդամների ընտրութեան կանոնադրութեան փոփոխման հարցը։

Սակայն, անդամուհիների սակաւութեան պատճառով, ժողովը չը կարողացաւ կայանալ և յետաձգվեց Զատկից յետոյ։

Տպված հաշւից քաղում ենք մի քանի տեղեկութիւններ ընկերութեան գործունէութեան մասին։ Ընկերութիւնը 1905 թ. ընթացքում ունեցել է 151 անդամ։ Մուտք ունեցել է 5274 ր. 15 կ., ծախք—6265 ր. 61 կ., իսկ առ 1-ն յունվարի 1906 ունի պատրաստ դրամ անձեռնմխելի և այլ—24,510 ր. 86 կ.։

Նախահաշիւը 1906 թւի համար կազմված է այսպէս—Մուտք սպասվում է—5390 ր. ծախք 5867 րուբլի։

Վարչութեան անդամներ եղել են տ. Վ. Ռոտինեան (նախագահ) տ. Հ. Մարտիրոսեան (փոխ-նախագահ), տ. տ. Մ. Ծուրինեան, Ն. Ղամբարեան, Մ. Մէլիք-Կարագեօզեան. Մ. Խատիսեան, Ս. Օհաննէսեան, Մ. Բէհբութեան և Վ. Մելեան- անդամներ, իսկ փոխ-անդամներ—տ. տ. Կ. Լիսիցեան, Ե. Առաքելեան, Վ. Եսայեան և Ս. Էմինեան։

Ընկերութեան արհեստանոցում սովորել են 123 աշակերտուհիներ։

Առհասարակ, Հայուհեաց Բարեգ. Ընկերութեան գործունէութիւնը եղել է համեստ, բայց արդիւնաւոր։

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Էջմիածին, մարտի 15-ին

Մարտի 6-ին, ս. Էջմիածնի սրբազան Սինոդը՝ լսեց Բեսարաբիայի սրբ. առաջնորդի իմ նկատմամբ բողոքը՝ յանուն Վեհափառ Կաթողիկոսի և սուտ առաջնորդական իշխանական բարձրութեամբ արձակած վճիռը, որով նա ինձ դադարեցրել էր պաշտօնավարութիւնից։ Սինոդը՝ նոյն ժամուն լսեց նաև իմ բողոքը տ. Թեմակալի մեղադրանքների կէտերի նկատմամբ։ Առ այս, Սինոդը վճռեց, վերադարձնել ինձ առ. ծխականս և շարունակել քահանայագործութիւնս, իսկ առաջնորդական մեղադրական փաստերի նկատմամբ, թէ որքան ճիշդ են և արդար, Սինոդը նշանակեց քննիչ Աստրախանի թեմից Յ. քահանայ Սաւրիկեանին։

Ի գիտութիւն ընթերցողների յայտնում եմ նաև այն, որ Էջմիածնում պարզվեց նախ, որ Վեհափառ Հայրապետի կողմից չէ եղել թէ՛ պաշտօնական և թէ մասնաւոր կարգադրութիւն Տաւրիկեան նահանգապետի միջոցով ինձ Թէոդոսիայից՝ Էջմիածին բերելու, թէև յունվարի 17-ին Բեսարաբիայի տ. Թեմակալը դիմել էր Տաւրիկեան նահանգապետին այս հեռագրով։ «Вслѣдствіе предложенія Верховнаго Патріарха и Като икоса Всѣхъ Армянъ, покорнѣйше прошу ваше превосходительство немедленно отправить Θеодосійск го священника Нерсеса Эртевцянца Эчміадзинъ, такъ какъ вопреки распоряженія Высшаго Духовнаго Начальства Эртевцянцъ продолжаетъ священнодѣйствовать, нарушаетъ спокойствіе общества Армянъ.

Начальникъ армянской епархіи архіепископъ Нерсесъ». և սոյն Վեհափառը ոչ էլ արձակած է եղել ինձ Բեսարաբիայի թեմից՝ ինչպէս այս գրված էր «Крымскій Вѣстникъ»-ի № 28-ում։

Փետրվարի 28-ին, երբ պատիւ ունեցայ Վեհափառ Հայրապետին ներկայանալու, Վեհի առաջին հարցը եղաւ այս։

—Ինչու էք եկած։

—Ձերդ Սրբութիւնն է բարեհաճել հեռագրով ինձ կոչել, ուստի եկած եմ լսելու Վեհիս կամքը։

—Ես ձեզ կանչած չեմ և ինչու պիտի կանչէի. կէրին ադուն են կանչել՝ և հայեացքը նետեց Հայրապետը դէպի դիւանի դրան…

Բայց երբ խօսք խնդրեցի շարունակելու տեսնելքս, ծերունազարդ ս. Հայրապետը արդէն վրդովված էր ներքին բուռն յուզմամբ, ուստի թեկն գալով բարձերին՝ լռութեամբ մեկնեց ինձ իր աջը՝ և ես շտապեցի համբուրելու արդէն ցամաքած օծեալ հայրապետական աջը՝ և դուրս եկայ դէպի դիւանատուն։

Դիւանատունն ցոյց տալով վերոյիշեալ հեռագիրը՝ խնդրեցի գիտնալ թէ, դիւանից է անցել այս հեռագիրը, բայց հայր դիւանապետի խօսքը քարտուղարի ներկայութեամբ եղաւ այս. «Դիւանից՝ Վեհի կողմից՝ այսպիսի հեռագիր տրված չէ Բեսարաբիայի առաջնորդին»։

Այս կեղծիքի դէմ բողոքեցին Սինոդին. բայց տեսնենք գաղտնիքը որի փէշերի ներքոյ պիտի երևան գայ։

Ներսէս քահանայ Էրթեւցեան

Նուխի, մարտի 7-ին

Արեշ գաւառի աւերված վեց հայ գիւղերի աղէտեալների օգտին ստացված է Նուխուից, պ. Մ. Ահարոնեանցից երեսուն և հինգ րուբլի, որը ժողովվել է Աղիլհանովի կարէ արհեստանոցի ծառայողներից և բանուորներից, որոնց բոլորին օրհնելով յայտնում եմ խորին շնորհակալութիւն։

Փոխանորդ հայոց Նուխուոյ վիճակի Եղիշէ վարդապետ Ահարոնեանց։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մարտի 18-ին Թիֆլիսի դատաստանական պալատում դռնփակ քննվում էր Կարսի նահանգի Օլթիի շրջանի Ագրեակ գիւղի բնակչուհի Մարիամ Ֆիրմանեանի և ուրիշ 14 գիւղացիների գործը, որոնք մեղադրվում էին հայոց եկեղեցական կալուածների գրաւման ժամանակ ցոյց տուած դիմադրութեան համար։ Երևանի նահանգական դատարանը մեղադրեալներին դատապարտել էր, հաշւառաբար դատաւորների պատժական կանոնագրքի 33-դ յօդուածի հիման վրա, երեք ամսվայ բանտարկութեան։ Դատախազը բողոքել էր այդ վճռի դէմ, պահանջելով պատիժ պատժական օրէնսգրքի 265 յօդուածի հիման վրա, որ նախատեսնում է բացարձակ ապստամբութիւն իշխանութեան դէմ։ Պալատի վճիռը յայտնվեց դռնբաց։ Պալատը, անհետևանք թողնելով դատախազի բողոքը, հաստատեց նահանգական դատարանի վճիռը և Բարձրագոյն մանիֆեստի հիման վրա մեղադրեալներին ազատեց պատժից։ Մեղադրեալներին պաշտպանում էր երդ. հաւատարմատար Տիգրան Յովհաննիսեան։

Մարտի 15—18 Թիֆլիսի դատաստանական պալատում դասակարգային ներկայացուցիչների մասնակցութեամբ դռնփակ քննվում էր սօցիալիստ-յեղափոխականների յայտնի գործը, որով ուսանող Խուդադով և հինգ գիւղացիներ՝ Դաւիթ Կաչաուրի, Գասպար Բոչորեան, Ֆիօ Պապլիաշվիլի, Ալեքսանդր Ցկիպուրիշվիլի և Պետր Բատուրինցև մեղադրվում էին քրէական նոր օրէնսգրքի 125 յօդուածի 2 մասի և հին քրէական օրէնսգրքի 1457 յօդուածի 2 մասի հիման վրա։ Մեղադրեալներից Կաչաուրիին և Բոչորեանին պաշտպանում էին երդ. հաւատարմատար Մավէյ Գրուզենբերգ և երդ. հաւատարմատարի օգնական Ռուբէն Յովհաննիսեան, Պալիաշվիլին և Ցկիպուրիշվիլիին պաշտպանում էին երդ. հաւատարմատարներ Եօսիֆ Բարաթով և Եսայի Դոլուխանեան. ուսանող Խուդադեանին պաշտպանում էին երդ. հաւատարմատար Տիգրան Յովհաննիսեան և երդ. հաւատարմատարի օգնական Կոստանտին Ջապարիձէ, և Բատուրինցևին Յովսէփ Ղորղանեան։ Պալատը վճիռը յայտարարեց դռնբաց։ Պալատը մեղաւոր ճանաչելով Կաչաուրիին, Բոչորեանին, Պալիաշվիլին և Բատուրինցևին՝ դատապարտեց աքսորի, իսկ ուսանող Խուդադեանին և Ցկիպուրիաշվիլիին արդարացրեց։

Թիֆլիս քաղաքի, Թիֆլիսի և Բորչալուի գաւառների ժամանակաւոր գեներալ-նահանգապետը հետևեալ կարգադրութիւնն է արել. Նոր լոյս տեսած «На поворотѣ» թերթի հէնց առաջին համարից նկատում եմ, որ նրա խմբագիր Ա. Մգիվանին ցանկանում է թերթը հրատարակել նոյն ուղղութեամբ, որը պատճառ եղաւ իր խմբագրութեամբ հրատարակվող «Возрожденіе» թերթի փակման։ Այդ պատճառով առաջարկել յիշեալ թերթի խմբագրին անմիջապէս փոխել տոնը և նրա ուղղութիւնը, որովհետև հակառակ դէպքում, ես ստիպված կը լինեմ խմբագրի դէմ գործադրել 1892 թւի հրատ. ընդհ. նահ. կառավ. II հատ. 23 յօդ. 19 յաւել. 16 կէտը, որով ինձ իրաւունք է տրվում առանձին անհատներին արգելել մնալու զինուորական դրութեան մէջ դրված շրջանում։ Ստորագրեց. գեներալ-մայոր Տիմոֆէև։

Սահմանադիր-ռամկավար կուսակցութեան օրգան «Новое Обозрѣніе»-ի դադարեցման պատճառով մարտի 21-ից, այսօր, լոյս է տեսնում «Кавказская мысль» թերթը Ի. Մ. Դոլուխանեանի խմբագրութեամբ։

Կովկասեան ցենզուրական կոմիտէի տեղական և արևելեան լեզուների աւագ ցենզոր Ա. Ի. Քիշմիշեանին առաջարկված է կատարել կոմիտէի նախագահի պարտականութիւնները, որովհետև նախագահ Մ. Պ. Գակկէլը նշանակված է Կովկասեան Փոխարքայի խորհուրդի անդամ։

Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձական խորհրդին մինչև այժմ մասնակցում էին շրջանային և միջնակարգ ուսումնարանների վերատեսուչները, իսկ քաղաքային հասարակական հիմնարկութիւններից ոչ ոք չէր մասնակցում, այն ինչ այս վերջինների մասնակցութիւնը կարող է նպաստել ուսումնարանների կեանքի հետ սերտ կապ ունեցող խնդիրների կանոնաւոր և բազմակողմանի մշակելուն, քանի որ այդ անձինք մօտիկ են կանգնած կեանքի առօրեայ պահանջներին։ Այս նպատակով լուսաւորութեան մինիստրը մինիստրների խորհրդում մի զեկուցումն է ներկայացրել և խորհուրդը վճռել է այսուհետև ուսումնական հոգաբարձուների խորհրդին իրաւունք տալ հրաւիրելու իրանց նիստերին նահանգական ազնուականների պարագլուխներին, նահանգական վարչութեան նախագահներին և նահանգական քաղաքների քաղաքագլուխներին։ Այս կարգադրութիւնը ի միջի այլոց Կովկասեան Փոխարքայի դիւանատունը հաղորդել է ի գիտութիւն և ի գործադրութիւն Կովկասեան ուսումնական շրջանի պ. Հոգաբարձուին։

Կովկասեան ցենզուրական կոմիտէն դատաստանական պատասխանատուութեան է ենթարկել Թիֆլիսում հրատարակվող «Արշալոյս» թերթի ժամանակաւոր խմբագիր Յ. Մանանդեանին, մարտի 16-ի համարում սօցիալ-դէմօկրատական կուսակցութեան հայ կոմիտէի թռուցիկը տպագրելու համար։

Թիֆլիսի նահանգական դատարանի մարտի 15-ի որոշմամբ սնանկ է յայտարարված Թիֆլիսի վաճառական Ի. Ս. Տէր-Սարգսեանը, որ խանութ ունի Դվորցովի փողոցի վրա։ Կարգադրված է բանտարկել նրան։

Ղարսի մօտ սուրաժնիկները մարտի 15-ին սաստիկ հրացանաձգութիւն են ունենում յայտնի աւազակ գէնւուկցի Համիդի հետ, որի ժամանակ սպանվում է Համիդը իր երկու ընկերով։

Ն. Ի. Թամամշեանը խնդրամատոյց է եղել թոյլ տալու իրան հրատարակելու Թիֆլիսում ռուսերէն լեզուով մի թերթ «Кавказскій Рабочій Голосъ» անունով։

Մտադրութիւն կայ Զատկի տօների մօտ Թիֆլիսի ֆունիկուլիօրի շարժողութիւնը ս. Դաւիթի սարի վրա վերսկսելու։

Կիրակի օր տեղի ունեցաւ «Արգիւնաւոր պաշտօն» պիեսայի ներկայացումը Ժողովարանի դահլիճում։ Ներկայացումը գրաւել էր ամեն դասակարգի հոծ բազմութիւն, տիրում էր մեծ աշխոյժ և ոգևորութիւն։ Միջնարարներին նուագում էր զուրնաչիների խումբը։ Խաղում էին լօտօ, և փռփռուն օրիորդներ՝ ժպիտը երեսներին նամակներ էին ցրում աջ ու ձախ, անծանօթ թղթակիցներ։ Կոնֆետտիները, գոյնզգոյն թիթեռների նման, թռչկոտում էին օդի մէջ և հանգչում սրա, նրա գլխի վրա։ Դերակատար սիրողուհիները ուսանար չարին հանդիսականներին չը նայած որ առաջին անգամ էին բեմ դուրս գալիս, ընդհակառակը իրանց համարձակ խաղով նրանք բաւական զուարճութիւն պատճառեցին հասարակութեան։ Երեկոյթը առհասարակ աջող էր կազմակերպված և դրա համար պէտք է գովել կազմակերպողների եռանդը։ Ներկայացումից յետոյ տեղի ունեցան պարեր, զինուորական երաժշտութեան ներդաշնակութեամբ։ Երեկոյթը վերջացաւ կէս գիշերից շատ ուշ։

Շաբաթ, մարտի 18-ին, «Թիֆլիսի ժողովարանում» յօգուտ «Թիֆլիսի գործակատարների փոխադարձ օգնութեան ընկերութեան» կայացաւ մի ներկայացում երեք լեզուով—ռուսերէն, վրացերէն և հայերէն՝ մասնակցութեամբ դերասանների և սիրողների։ Այդ ներկայացումը, որը անցաւ բաւարար, գրաւել էր բաւականաչափ հասարակութիւն, այնպէս որ դահլիճը բոլոր տեղերը համարեա բռնված էին։ Ներկայացումից յետոյ պարեր ևս տեղի ունեցան։ Անտրակտներում, դահլիճից դուրս, մի քանի օրիորդներ ծաղիկներ էին վաճառում և փոստարկղ էին սարքել «ընկերութեան» օգտին, այնպէս որ զուտ եկամուտը 500 րուբլուց աւելի են հաշւում։

Թիֆլիսում կազմակերպվում է սպիրտային խմիչներ պատրաստելու ընկերութիւն, որը բաղկացած է հետևեալ անձերից՝ Սարաջեվ, Խուբլարեան, Սողոմոնեան, Մեղվինով, Ալեքսանդրով, Գաբաեվ, Կվեցերելի, Բաղդասարեան և ուրիշները։

Անդրկովկասի երկաթուղու ճանապարհի գլխաւոր նէյգեբաուէրին պահանջ է յայտնված ուղարկել պահակախումբ Սվիրիի և Աջամեթիի կամուրջների համար և 2 վաշտ զօրք Րիօն կայարանի համար։

Վերջին աղէտներից վնասվածների օգտին մի ոմն-ից 2 րուբլի։

Մարտի 19-ին երեկոյեան ժամի 8-ին Վերայի քաղաքամասում, Արագվինսկի փողոցի վրա, խանութից դուրս գալու ժամանակ, ատրճանակի գնդակի մի հարուածով սպանվել է աւագ—գորոդովոյ Կրիւչկովը։ Սպանողը անյայտ է։ Սպանված Կրիւչկովը 30 տարի ծառայում էր գորոդովոյի պաշտօնում, ունի 2 սեփական տուն։ Կալանաւորված են սպանութեան տեղի հարևան ապրողները։

Քաղաքային վարչութիւնը իշխ. Գեգեվանովին 3 տարի ժամանակով կապալով տուեց Մուխրանսկի փողոցում գտնվող պարտէզը 11,000 րուբլով տարեկան։

Թիֆլիս քաղաքի և Բորչալուի գաւառի գեներալ-նահանգապետ, ինչպէս հաղորդում են, կը նշանակվի գեներալ-մայոր Ալիխանովը։

«Рус. Вѣд.»-ի թերթը հաղորդում է, որ սահմանադիր-ռամկավար կուսակցութեան Ռոստով-Նախիջևանեան բաժանմունքի բիւրօյից, Սիմֆերոպոլի կանանց հաւասարութեան միութիւնից, Ելիսաւետգրադի ժողովրդական ազատութեան կուսակցութեան կոմիտէից, Եալտայի երդուեալ հաւատարմատարների ու նրանց օգնականների կօնսուլտացիայից, «Голосъ Юга» թերթի խմբագրութիւնից (Ելիսաւետգրադում), Կազանի Մարիինսկի իգական գիմնազիայի տեսչուհուց և մանկավարժական խմբից ստացվել է բողոք, որով միանում են մահվան պատժի դէմ յարուցած բողոքին։ Մարտի 11-ին խմբագրութիւնը ստացել է 34 հատ առանձին յայտարարութիւններ 738 հոգու ստորագրութեամբ։ Խմբական յայտարարութիւնները չը հաշւելով, որոնց թիւը ճիշտ որոշ չէ, մինչև այժմ մահվան պատժի դէմ բողոքողների թիւը հասնում է 14,628 հոգու։

Տօմսկից «Веч. Гол.»-ին հաղորդում են. մարտի 10-ին, Բերդեննիկովին կախել են զինուորական նահանգային դատարանի վճռի համաձայն, ոկոլօդոչնի Գրիշինի սպանութեան համար։

Ինչպէս հաղորդում է «Русск. Вѣд.»-ին, մարտի 11-ին Տամբովի ժամանակաւոր զինուորական դատարանում քննվում էր օր. Սպիրիդոնովայի գործը, որ մեղադրվում էր Լուժենովսկուն սպանելու համար։ Նախագահում էր գեներալ Իվանենկօ, անդամներ էին տեղական զօրքի 4 սպայ, մեղադրում էր զինուորական դատախազի օգնական Նիկիտին, պաշտպանում էին երդուեալ-հաւատարմատար Տեսլենկօ և զինուորական դատաստանական պաշտօնի թեկնածու Ֆիլօնօվ։ Վճիռը յայտարարվից դռնփակ։ Դատապարտված է մահվան պատժի։ Դատարանը որոշեց խնդրել մահվան դատավճիռը փոխել տաժանակիր աշխատանքի։ Դատապարտեալի տուած բացատրութիւնները ցնցող տպաւորութիւն գործեցին։

Մարտի 10-ի նիստում մինիստրների խորհուրդը քննում էր, ի միջի այլոց, արևմտեան նահանգների ռուս ազգաբնակութեան ներկայացուցիչների խնդիրքը՝ իրաւունք տալ յիշեալ ազգաբնակութեանը առանձին ընտրելու իրանց կողմից ներկայացուցիչներ Պետական Դումայի և Պետական Խորհրդի համար։ Մանրամասն կերպով քննելով այդ խնդիրը և միանգամայն համակրանքով վերաբերվելով, խորհուրդը, այնուամենայնիւ, գործնական տեսակէտից այդ բանը դժուար համարեց իրագործել։ Խորհրդի կարծիքը ներկայացված է Թագաւոր կայսրի բարեհայեցողութեանը։ (Страна)

Կառավարչական Սենատը բացատրել է, որ Պետական Խորհրդի անդամ ընտրվողները պէտք է աւարտած լինեն ռուսաց միջնակարգ դպրոցների դասընթացը կամ թէ օրէնքով որոշված կարգով համապատասխան քննութիւն տուած լինեն, և որ, այդ պահանջը, ինքն ըստ ինքեան, պայմանաւորում է յիշեալ բարձրագոյն հաստատութեան համար ընտրվածների ռուսերէն լեզուն իմանալը։ (Страна)

Պօստ-հեռագրական վարչութիւնը, ինչպէս հաղորդում է «Ռ. Գ.»-ը, խիստ միջոցներ է ձեռք առել ապագայ գործադուլների առաջն առնելու համար։ Այդ նպատակով էլ համապատասխան ցուցմունքներ են տրված պօստ-հեռագրական շրջանային կառավարիչներին։ Բացի դրանից հեռախօսական յարաբերութիւնները անընդհատ պահպանելու համար, ծովային և զինուորական վարչութիւնների մէջ մի քանի խումբ գրագիրների և զինուորների սովորեցրել են հեռագրական գործը, որոնք կարող են հարկաւոր դէպքում աշխատանքն սկսել։

Ներքին գործերի մինիստրութիւնը հետևեալ շրջաբերական հեռագիրն է ուղարկել նահանգապետներին և քաղաքապետներին. «Մոսկվայից տեղեկութիւններ են ստացվել, որ մարտին նորից գործադուլ պէտք է լինի։ Սաստկացրէք հսկողութիւնը և ամեն կերպ աշխատեցէք թոյլ չը տալ յեղափոխականներին գրգռելու ժողովրդին անկարգութիւններ անելու։ Կալանաւորներին պահելը կատարեցէք մեծ զգուշութեամբ»։ (Страна)

«Бирж. Вѣд.»-ի թերթը հաղորդում է. Վերջին օրերի ընթացքում Րիգայի քաղաքի ժամանակաւոր զինուորական դատարանը մահվան պատժի դատապարտեց 15 գիւղացիների, որոնցից 9 հոգին մեղադրվում էին կալուածներ թալանելու և հրդեհելու մէջ։ Վեց հոգին պէտք է պատժվեն կալուածատէր Բարանովին սպանելու համար։ Ռունդալենում գնդակահար է արված ազնուական Սկուդենէկ, որը յօժարակամ ներկայացել էր պատժիչ զօրախմբի հրամանատարին։ Դէպքից մի քանի օր առաջ զօրքը չը գտնելով Սկուդենէկին հրդեհել էր նրա հօր կալուածքը։ Ամբողջ Պրիբալտեան երկիրը դրված է պատուհասի մէջ. գիւղացիները ծեծվում, աքսորվում են. բանտերը լիքն են քաղաքական բանտարկեալներով։

Մինչև այժմ յայտարարված ընտրողների ընտրութիւնների հետևանքները Ռուսաստանում հետևեալն է. քաղաքային ընտրողական ժողովներում ընտրված են 180 հոգի, որից 39 հոգին յայտնի չեն թէ ինչ ուղղութեան են պատկանում (դրանց թւում 16 հոգի հրէայ ընտրողներ են) սահմանադիր-ռամկավար կուսակցութեան թեկնածուներ 42 հոգի, «հոկտեմբերի 17-ի միութեան» 15 հոգի, առևտրա-արդիւնաբերականը՝ 6, ռուս մարդկանց միութիւնը՝ 1, իսկ միւսները պրօպագանդիստ և աջակողմեան կուսակցութեան, ընդհանուր առմամբ։ Այսպիսով քաղաքային ժողովների ընտրութիւնները առ այժմ յօգուտ սահմանադիր-ռամկավար կուսակցութեան է։ Հողատէրերի ժողովներում ընտրված են 68 ընտրողներ, որոնցից 20-ը անյայտ ուղղութեան, 18-ը սահմանադիր - ռամկավար կուսակցութեան թեկնածուներ, 8-ը հոկտեմբերի 17-ի միութեան, 7-ը լեհ-նացիօնալիստներ, 7-ը աջակողմեաններ, 3-ը իրաւակարգի կուսակցութեան 2-ը մօնարխիստներ։ Այս ժողովներում ձախակողմեանները և աջակողմեանները մրցում են հաւասար ույժերով։ Սահմանադիր-ռամկավար կուսակցութեան յայտնի գործիչներից արդէն ընտրված են, Ի. Պետրունկեվիչ. իշ. Պ. Դ. Դոլգորուկով, իշ. Դ. Շախօվսկի, Ֆ. Ռօդիչեվ, Ա. Նովօսիլցեվ, Վ. Եակուշկին, Մ. Կոմմիսսարով և ուրիշները. չէ ընտրվել միայն Ե. դը-Ռոբերտին։ Ինչպէս արդէն նըկատվում է, ձախակողմեան կուսակցութիւնը աննպաստ պայմանների մէջ էլ յաղթանակում է դարձեալ։ «Рус. Вѣд.»։

Կառավարչական բարձր շրջաններում ներկայումս հարց է զարթեցրված զանազան դաւանութիւնների խառն ամուսնութիւնների մասին։ Այդ հրատապ հարցը, որ երկար ժամանակ յուզում էր մեր ծայրերկրների այլազգիներին, այժմ իրական լուծումն պէտք է ստանայ։ Խառն ամուսնութիւնների վերաբերեալ հարցը լուծելու համար բոլոր նախապատրաստական աշխատութիւնները այժմ կենտրոնացած են մի մասը օտար դաւանութիւնների հոգևոր գործերի դեպարտամենտում, իսկ միւս մասը պետական դիւանատանը։ (Т. Л.)

Մարտի 18-ին դարձեալ օֆիցերների և կօզակների շորեր հագած մի խումբ յափշտակիչներ 7—8 հոգուց բաղկացած, ներս են խուժել քաղաքիս 4-դ մասում բնակվող կապալառու Բալոնթարովի տունը և մահվան սպառնալիքով յափշտակել են առձեռն դրամ 800 րուբլուց աւելի և այլ թանկագին իրեղէններ։ Իրազէկ անձինք պնդում են՝ որ կօզակների խմբակի անդամները կապեր են պահում մեծ մասամբ տան ծառաներից ոմանց հետ, որոնք տան հանգամանքների հետ ծանօթ են և այսպիսով «բերդի բանալին» ներսից ձեռք բերելով՝ համարձակ և անպատիժ կարողանում են իրանց չար մեքենայութիւնները գլուխ բերել։ Տանտէրերից և կենտրոնից աւելի գործնականները և հեռատեսները, որոնք համոզվել են ծառաների անհաւատարմութեան մէջ—սկսել են փոխարինել դրանց—կին—սպասուհիներով՝ յամենայն դէպս աւազակային յարձակումներից նախապահպանելու համար, խաղաղ բնակիչները իրազէկ մարդկանց այդ պնդումները անուշադիր չը պէտք է թողնեն և որոշ հսկողութիւն պէտք է սահմանեն իրանց կասկածելի ծառաների և նրանց մօտ եկող-գնացողների վրա։

Մարտի 12-ին Պետերբուրգում կայացաւ Լեֆօրտովսկի և Պրեսնենսկի բանուորների ժողովը, որոնք հրաւիրված էին քննելու ընդհանուր քաղաքական գործադուլի հարցը, գործադուլային գլխաւոր կոմիտէի ծրագրի համաձայն։ Ճառախօսների մեծ մասը խօսեց գործադուլի դէմ, համարելով նրան մանաւանդ անժամանակ Զատկի տօները մօտենալու պատճառով։ (Русь)

Ոստիկանութեան դէպարտամենտի յարուցած հարցին թէ՝ կարող են, արդեօք Պետական Դումայի այն անդամները, որոնք իրանց յեղափոխական կուսակցութիւնների անդամ են յայտնել, ենթարկվել կալանաւորութեան, ներքին գործերի մինիստրութիւնը, արդարադատութեան մինիստրի հետ համաձայնութեան գալով, պատասխանել է որ, Պետական Դումայի այդպիսի անդամները, յանցանքների առաջն առնելու նպատակով, կարող են ենթարկվել անձնական կալանաւորութեան։

(Руск. Гос.)

Մարտի 11-ին Ֆինլանդիայի գեներալ նահանգապետ Գերարդը հրաժարական է տուել ծառայութիւնից։ Մի քանի շրջաններում նրան թեկնածու են համարում իբրև թէ կոմս Վիտտէի պաշտօնի։ «Рус. Вѣд.»

Իրկուտսկից «Веч. Гол.»-ին հաղորդում են որ տեղական փաստաբանները, աչքի առաջ ունենալով փաստաբանական խորհրդի ամբողջ կազմի, նախագահի հետ միասին, կալանաւորումը, որոշեցին խորհրդի նոր կազմ չընտրել մինչև, որ կալանաւորներին չարձակեն։ Խորհրդի ֆունկցիան անցաւ նահանգական դատարանին։

Տագանրոգից հաղորդում են Бирж. Вѣд.-ին. գործադուլ արեցին արտելները ու կառապանները։

«Рѣчь»-ը տեղեկութիւններ է ստացել, որ կառավարչական սենատի դեպարտամենտում ներկայումս չափազանց շատ գործեր են ստացվել նահանգապետներին պատասխանատուութեան ենթարկելու մասին, որոնց մեծ մասը, «Ջարդերի գործեր» են։ Անցեալ տարվայ հոկտեմբերի ջարդերի դէմ միջոցներ չը գործադրելու համար պատասխանատուութեան են ենթարկվում. Մինսկի նահանգապետ Կուրլօվ, Ռոստովի քաղաքապետ կոմս Կոյերբուրգ-Պիլլեր-ֆօն-Պիլխաու, Օդեսայի քաղաքապետ Նէյդգարդ, Տվէրի նահանգապետ Սլեպցով, Տամբովի նախկին նահանգապետ և այժմ Պետերբուրգի նահանգապետ Ֆօն-դեր Լաունից և այլն։ Նէյդգարդի և Կուրլովի գործը պէտք է քննված լինի մարտի 15-ին, իսկ միւսների մասին զեկուցում է պատրաստվում և կը քննվի ոչ վաղ ապրիլից։ Նէյդգարդը իրան արդարացնելու համար բազմաթիւ տեղեկութիւններ ու բացատրութիւններ է տուել։

Հրամայված է հսկողութիւնը սաստկացնել երկաթուղիների, գործարանների, հանքերի և արհեստանոցների բանուորների վրա։ Մի և նոյն ժամանակ աւելացվել են երկաթուղիների ժանդարմների թիւը։ (Страна)

Նախորդ համարներից մէկում մենք տուել էինք Մոսկվայի նահանգական զեմստվօյի կօֆլիկտի մասին տեղեկութիւն։ Այժմ հաղորդում են, որ ներքին գործերի մինիստրը անհետևանք է թողել վարչութեան նախագահ Օ. Թ. Գոլովինի հրաժարականի խնդիրը ի նկատի առնելով նրա համաձայնվելը մնալ պաշտօնում մինչև նոր ընտրութիւնները։ Մնում են նոյնպէս վարչութեան անդամները։ Կօնֆլիկտը աջող ելք ունեցաւ։ (Р. В.)

Մարտի 12-ին Պետերբուրգում կայացաւ կիրակնօրեայ հանգստութեան առիթով լրագրական բանուորների ժողով, որի ժամանակ որոշեցին. «Աչքի առաջ ունենալով, որ կիրակնօրեայ հանգստութիւնը անհրաժեշտ է բանուոր դասակարգի անհատական և հասարակական նորմալ կեանքի համար, ժողովը որոշում է գործադրել կիրակնօրեայ հանգստութիւն և յանձնարարում է տպագրական գործի բանուորների միութեան բիւրօյին, թերթերի խմբագիրներին, հրատարակիչներին և աշխատակիցներին յայտարարել ժողովի որոշումը այդ հարցի խաղաղ լուծման համար»։ (Русь)

Մարտի 10-ին Պետական խորհրդի արտակարգ նիստը քննեց Ջարդերից վնասված մասնաւոր անձանց օժանդակութիւն տալու հարցը։ Ի. Գոլուբեվի նախագահութեամբ կայացած առանձին խորհրդի եզրակացութիւնը ընդունվեց ամբողջապէս։ Վճռված է Պետական գանձարանից օժանդակութիւն տալ 8 միլիօն րուբլի (անդամների փոքրամասնութիւնը պահանջում էր 10 միլիօն րուբլի) այն կալուածատէրերին, որոնք իրանց սեփական միջոցներով չեն կարող վերանորոգել գործի համար անհրաժեշտ տնտեսական շէնքերը և բնակարանները, նաև կարգի բերելու կամ փոխելու փչացած կամ ոչնչացված ինվենտարը։ Օժանդակութեան համար պէտք է վճարեն տարեկան 4% սկսած 1910 թւի յունվարի 1-ից, իսկ ամբողջ գումարը պէտք է վերադարձնեն յիշեալ ժամանակից սկսած 35 տարվայ ընթացքում։ Վիճաբանութիւնների սկզբում անդամներից մի քանիսը կարծիք յայտնեցին, որ վնասված կալուածատէրերին անհրաժեշտ է տալ ոչ թէ օժանդակութիւն, այլ վնասների լրիվն վարձատրութիւն, որը պէտք է ստանալ յանցաւորներից: Բայց այդ կարծիքը մերժվեց: Բաւականին երկար վիճաբանութեան առիթ եղաւ օժանդակութիւնից տոկոսներ ստանալու հարցի մասին: Տոկոս չը ստանալու կուսակից էին 15 հ-գի, իսկ հակառակ 49 հոգի: Օժանդակութիւնը նահանգների վրա բաժանելու համար կը կազմվեն առանձին խորհուրդներ Պետերբուրգում երկրագործութեան մինիստրի վրա նախագահութեամբ, գաւառների կը բաժանեն նահանգական ատեանը զեմստվոյին և ազնուականութեան ներկայացուցիչների մասնակցութեամբ և նահանգապետի նախագահութեամբ: Առանձին անհատներին տալու նպաստը պէտք է որոշեն գաւառական ատեանները գաւառական պարագլխի նախագահութեամբ, եթէ միայն նա ինքը վնասվածներից չէ, բայց եթէ նա ևս վնասված է, այն ժամանակ գաւառական զեմստվոյի վարչութեան նախագահի: Կոմս Վիտտէն դարձեալ ներկայ չէր երէկվայ Պետական խորհուրդի նիստին, իսկ խորհուրդի ծրագիրը պաշտպանում էր գլխաւորապէս Կոկօվցեվը: «Русь»

ԳՈՐՈՒՑ, մեզ գրում են. «Կիրակի, մարտի 12-ին, ս. Աստուածածին մայր եկեղեցում պատարագից յետոյ, խուռն բազմութեան ներկայութեամբ, հոգեհանգիստ կատարվեց Թուրք-հայկական կոտորածներին զոհ գնացած հայերի յիշատակին: Հոգեհանգստից առաջ նախ կարդացվեց Վեհափառ Հայրապետի կոնդակը, որով հայ ժողովրդի ուշադրութիւնն է հրաւիրում նիւթական օժանդակութիւն հասցնել տառապեալ եղբայրներին. իսկ յետոյ՝ տեղիս փոխանորդ Խորէն վարդապետ Մուրադբէգեանը համառօտ, բայց շատ ազդու քարոզով նկարագրելով հայերի մի շարք հարուածներից առաջացած տնտեսական անելանելի վիճակը, դիմեց հասարակութեանը առաջարկելով կազմել երկու սեռից բաղկացած մի մասնաժողով դրամական ժողովարարութիւն անելու համար: Հոգեհանգիստը և առ հասարակ օրվայ անսովոր պատկերը այնպիսի տպաւորութիւն թողեցին հասարակութեան վրա, որ նոյն իսկ տեղիս մի քանի առաջնակարգ յայտնի տիկիններ հէնց խսկոյն և եթ յանձն առան գլուխ կանգնելու բարոյական այդ սուրբ գործին: Իսկապէս անսովոր էր օրվայ պատկերը, կրկնում եմ դարձեալ, որովհետև ծով է տեսնում ազգային խմբված ոգևորութիւն Վրաստանում ապրող հայ ազգաբնակութեան լճացած կեանքի մէջ: Այսուհետև Վրաստանում ապրող վիրախօս հայը, որ հեռու է մայրենի հողից, երկնքից, թող ոգևորվի իր սեփական ունեցած-չունեցած ազգային բնազդումով, թող յօյս ներշնչէ իր ազգակից տառապեալ եղբայրներին, ինչպէս նկատվում է վերջերս, և իր լուման գցէ կարիքի մեծ հանգանակում: Ցանկանում ենք լիակատար աջողութիւն: Ինչպէս միշտ, այնպէս էլ այժմս պատարագին երգում էր երկսեռ քառաձայն խումբը:

ՍՏԱՒՐՈՊՕԼԻՑ, մեզ գրում են: Քրիստափոր Միքայէլեանի ողբալի մահվան տարեդարձի առիթով, այստեղ եկեղեցում, բաւականաչափ բազմութեան ներկայութեամբ հոգեհանգիստ կատարվեց անմոռանալի գործչի յիշատակին: Պատարագիչ Ս. քահանան փորձեց կարճառօտ կենսական տեղեկութիւններ տալու հանգուցեալի մասին, սակայն համարեա ոչինչ չասաց, և նրա գործունէութեանը անծանօթ այստեղի հայերը այնպէս էլ մնացին անծանօթ: Պատարագից յետոյ ուսումնարանի դահլիճում ուսանող Գ. Սարգսեան ռուսերէն լեզուով ռեֆերատ կարդաց—«Հայկական հարցը և Եւրոպան» (հաշուելով նաև Ռուսաստանը): Կարծում ենք, որ դասախօսը իր համակրելի նպատակին չը հասաւ, որովհետև ինտէլիգենցիան հարցի հետ լաւ ծանօթ է հէնց այն աղբիւրներից, որոնցից օգտուել էր դասախօսը (Ամֆիտէատրով, Ջալալեան, Ջէվէլեգեան), իսկ հասարակ, մեծ մասամբ պանդուխտ, դասակարգը՝ հազիւ ծանօթ լինելով ռուսերէնին՝ բնականաբար չէր կարող հասկանալ դասախօսութեան լեզուն: Հանդիսականների դիմացը, բեմի վրա, շքեղ պսակի մէջ, դրված էր պաշտելի Քրիստափորի մեծադիր ձեռանկար պատկերը:

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շուշու ազնուական Ալէքսան-բէգ Զախարբէկովը, որը բնակվում է 5-րդ քաղաքամասում Միքէին փողոցում, Մանիեվի տանը, դիմեց ոստիկանապետի պաշտօնակատարին, խնդրելով փնտռելու նրա հարազատ եղբայր Արշակ Զախարբէկովին, որը մարտի 14-ին երեկոյեան մօտ ժամը 9-ին գնաց Շէյթան-բազար տուն համար «ալալա-քեաբաբ» գնելու, և այնուհետև չէ վերադարձել:

Մարտի 17-ին ոստիկանատուն եկաւ Ջելի գիւղի (Ախալցխայի գաւ.) բնակիչ Աղալի Կարաալա-օղլին և յայտնեց, որ առաւօտեան ժամը 10-ին 2 անյայտ մարդիկ յանձն առան տանել նրան փաստաբանի մօտ, բայց խաբեցին նրան և վերցնելով նրանից 125 րուբլի, անյայտացան:

Ժամանակաւոր գեներալ նահանգապետի կարգադրութեամբ Թիֆլիսում փակվեց Մկրտում Փարաջանեանի խանութը, որի մօտ գտնվեց սպանված կօզակ Տկաչի խակը:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

16 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 մարտի: Երէկ, ֆինանսների մինիստրի նախագահութեամբ բացվեցին միջնեւչական խորհրդակցութեան նիստերը՝ պետական եկամտային հարկի նախագիծը քննելու համար:

ՓԱՐԻԶ, 16 մարտի: «Թան»-ը գրում է, որ Ռուսաստանը, չը նայած բոլոր փորձութիւններին, պահպանելով եւրոպական համերգում իր նախկին նշանակութիւնը, ֆրանսիական շահերի պաշտպան հանդիսացաւ այնպիսի վճռական ձևով, որ Ֆրանսիան երբէք չի մոռանայ այդ ծառայութիւնը: Կոնֆերէնցիայի գլխաւոր հետևանքը Ֆրանսիայի վերաբերմամբ կայանում է նրանում, որ Ռուսաստանի և Ֆրանսիայի դաշնակցութիւնը աւելի ևս ամրապնդվեց, իսկ Անգլիայի, Սպանիայի և Իտալիայի հետ բարեկամութիւնը հաստատուեց:

ՊԱԼԵՐՄՕ, 16 մարտի: Գիշերս, Ուստիկա կղզում զգացվեցին ստորերկրեայ ուժեղ ցնցումներ: Ազգաբնակութիւնը հեռանում է կղզուց:

ԲԵԼԳՐԱԴ. 16 մարտի: Մի քանի նշաններ ցոյց են տալիս, որ կառավարութիւնը մտադիր է վերսկսել դիպլոմատիական յարաբերութիւնները Անգլիայի հետ: Լուրերին նայած, վճռված է ծառայութիւնից արձակել, թողնելով պահեստի զինուորների մէջ, Ալէքսանդրի դէմ կազմած դաւադրութեան գլխաւորներին, իսկ միւս կողմից մտադրվում է նոյն կերպ վարվել և հանգուցեալ թագաւորի կուսակից մի քանի յայտնի օֆիցերների վերաբերմամբ:

18 մարտի

ԱԼԺԵԶԻՐԱՍ, 17 մարտի: Խմբագրական յանձնաժողովի նիստում անգլիական պատգամաւոր Նիկօլսոնը նկատեց, որ անհրաժեշտ է մաքսային կանոնադրութիւնը խախտելու համար, առևտրականներին ծանր պահանջներ ենթարկել: Ներկայ վարչական կազմի պակասութիւնները պահպանելու դէպքում, անհրաժեշտ է հսկողութիւն կարգել մաքսային իշխանութիւնների գործունէութեան վրա: Այդ նպատակով Նիկօլսոնը ի ցոյց է դնում մաքսային գնահատողների և հսկիչ կոմիտէտի առանձին մասնաժողովի սահմանած նախագիծը:

ԲԵՐԼԻՆ, 17 մարտի: «Նորդդէյչէ-Ալլգէմէյնէ»-ն յայտնում է, որ կանցլերի առաջիկայում պաշտօնից հեռանալու մասին մի քանի լրագիրների տարածած լուրը ամբողջովին մտացածին է:

ՌԻԳԱ, 16 մարտի: Երեկոյեան ժամի 10-ին, 10 զինված կողոպտիչներ կտրելով քաղաքից երկու վերստ հեռաւորութեան վրա գտնվող էլեվատորի դռները, ներս մտան և աշխատեցին կոտրել փողի պահարանը, բայց չը կարողանալով՝ երկու ծառաների ատրճանակները խլելով անյայտացան:

ԼԻԲԱՎԱ, 17 մարտի: Ձերբակալված են երեք գիւղացի, որ խոստովանեցին թէ իրանք են սպանել կոմս Լամզդորֆին քաղաքական նպատակով:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 մարտի: Քաղաքային ընտրութիւնների ժամանակ, որպէս ընտրողներ Խարկովում ընտրվել են ժողովրդական ազատութեան կուսակցութեան 2 անդամ, Վոլօչանսկում՝ ազնուականների պարագլուխը և զեմստվային 3 ձայնաւորներ, բոլորն էլ ազատամիտ ուղղութեան տէր անձինք, Սէվսկում՝ զեմստվային ազատամիտ բժիշկը, Մօտենում՝ մի վաճառական և մի ազնուական, մի կալուածատէր, Կուրմիշում հողատէրերից, ուպրավայի նախագահը, նախկին նահանգապետ Անդրիէվսկին, հողատէր Դանկովը, գիւղացիներից՝ 2 հոկտեմբերականներ, քաղաքից՝ մի վաճառական, մի միապետական. խոշոր հողատէրերից՝ իշխան Դոլգորուկովը, հոկտեմբերեան 3 վաճառականներ, Քիշնեւում՝ գաւառի շրջաններից՝ 1 տանուտէր և 1 շինական, Մօգիլեւսկի նահանգի գաւառական քաղաքներից և Մօգիլեւից 24 ազնուական, 6 քահանայ, մի պատուաւոր քաղաքացի, մի քաղաքացի և 18 գիւղացի, Եարօսլավի բանուորներից՝ երկու ազատամիտ բանուորներ, Սուդժում՝ մի քահանայ և 18 գիւղացի, Բալաշովի մանր հողատէրերից՝ 13 քահանայ, 22 գիւղացի, 2 վաճառական, մի ազնուական: Օրսկում՝ շրջանային ժողովներում ընտրված են 44 հոգի, որոնց թւում կօզակների ատամանը, երեք տանուտէր, 13 մօլլաներ, Զարայսկի մանր հողատէրերից՝ 7 քահանայ, քաղաքային դըպրոցի կառավարիչը, ազնուականութեան խնամակալութեան անդամը, մի գիւղացի և մի պաշտօնեայ:

ԲՈՒԴԱՊԵՇՏ, 17 մարտի: Բանֆին դիմեց մինիստր-նախագահին մի բաց նամակով, որի մէջ խնդրում է, որ նա իր բոլոր ազդեցութիւնը գործ դնէ, որ պարլամենտը գումարվի օրէնքով որոշված ժամանակում: Եթէ պարլամենտը չը գումարվի, ուրեմն այդ նշան կը լինի սահմանադրութեան խախտման, որ հաստատված է թագաւորի երդումով, նոյն իսկ եթէ ընտրութիւնների ժամանակ Կօշուտի կուսակցութիւնը յաղթող հանդիսանայ: Այդ աւելի նուազ դժբախտութիւն կը համարվի, քան դէպի սուրբ երդումը,—պետական կարգի հիմունքը ունեցած հաւատի խախտելը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 մարտի: Պետերբուրգի ազնուականութեան կողմից՝ Պետական Խորհրդի անդամներ ընտրելու համար ընտրված են երկրագործական մինիստրութիւնների պաշտօնեայ Իլինը և բարոն Կորֆը:

ՉԻՏԱ, 17 մարտի: Վարչութեան հրամանով «Забайкалье» լրագիրը փակված է: Խմբագիր Նոլգանովը և աշխատակից Մարչէնկօն ձերբակալված են:

ԼԱՆՍ, 17 մարտի: Այսօր աջողվեց դուրս հանել Կուրէյրի երկու հանքահորերից 14 կենդանի բանուորների: Նրանք գետնի տակ մնացել են հէնց աղէտի առաջին րօպէից և կերակրվել են կորած ընկերների պաշարով և ախոռում եղած վարսակով: Բացի մէկից, բոլորն առողջ են:

ԼՕՆԴՕՆ, 17 մարտի: Մամուլը եռանդուն մեկնաբանում է լորդ Կիտչէների և կոմս Մինտօի ճառերը: «Տրիբունը» անհիմն է համարում երկիւղ կրել Ռուսաստանի ագրէսիվ մտադրութիւններից: «Ստանդարտ» և «Դէյլի-Գրաֆիկ» խօսում են հակառակ հայեացքով: Նրանց կարծիքով Ռուսաստանը աւելի շուտ կը ցանկանայ վարձատրել իրան իր կրած անաջողութիւնների համար Հեռաւոր Արևելքում:

ԼԱՆՍ, 17 մարտի: Հրդեհը հանգցնելու զբաղված բանուորները առաւօտեան ժամի 7-ին պատրաստվելով թողնել հանքահորերը—նկատեցին 13 մարդու, որոնք հազիւ հազ ոտքի վրա օրօրվելով մօտենում էին իրանց: Նրանց մէկը ասեց, որ նրանք եկել են № 3 հանքահորից, ուր մնացել են կենդանի թաղված 20 օր շարունակ: Ազատված բանուորներին զգուշութեամբ տարան վերև: Նրանք դժուարութեամբ են տանում ցերեկվայ լոյսը, շատ թոյլ են, սակայն իրանց բաւական առողջ են զգում: Չորս կողմից խմբվում են ահագին ամբոխներ: Ասում են, փլատակների տակից լսել են ուրիշ թաղվածների օգնութիւն հայցող աղաղակները:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 մարտի: «Դէյլի Խրոնիկլ»-ում տպված ռուս լրագիրների արտատպած այն լուրը, որ իբր մինիստրների խորհուրդը կարգադրել է դադարեցնել Մանջուրիայի զօրքերի առաքումը Ռուսաստան, հիմքից զուրկ է:—Առևտրի մինիստրի նախագահութեամբ բացվեց առևտրի և արդիւնաբերութեան ներկայացուցիչների խորհրդակցութիւնը՝ քննելու համար նահանգներում առևտրա-արդիւնաբերական վարչութիւններ կազմելու նախագիծը:

18 մարտի

ՍՄՈԼԵՆՍԿ, 18 մարտի: Քաղաքի կենտրոնում, ցերեկվայ ժամի 3-ին, բրաունինգի երկու հարւածով փողոցում սպանվեց ժանդարմական վարչութեան կառավարչի օգնական Գլադիշևը: Յանցաւորը փախաւ:

ՎԻԵՆՆԱ, 18 մարտի: Զատկական տօների պատճառով պատգամաւորների պալատը ցըրվեց մինչև ապրիլի 11-ը:

ԼԱՆ, 17 մարտի: Ազատված բանւոր Նէմին պատմում է. «Պայթումից յուզված, ես աշխատեցի գտնել մի ապահով տեղ և ճանապարհին տեսայ մօտ 50 դիականների մի կոյտ: Ապա ինձ գցեցի աւելի բարձր և ապահով տեղ, ուր հանդիպեցի 12 ընկերների: Նրանք ինձ փրկիչ համարեցին, բայց վհատեցին, երբ ես ասացի նրանց թէ ես էլ իրանց նման կենդանի թաղված եմ: Այդտեղ մենք մնացինք մի շաբաթ: Ես գիտէի ժամանակը, բայց մոռացել էի ժամացոյցս լարել: Կերակրվում էինք կաւով, կեղևով, ծառով, վարսակով և մեռած ձիերի մսով, իսկ մեր սկահակից ջուր էինք խմում, վերջին օրերս, բաժանվելով երեք խմբերի, մենք աշխատում էինք մթութեան միջից դուրս գալու հնար գտնել: Երէկ զգացինք մաքուր օդի մի աղբիւր և գնացինք այդ ուղղութեամբ: Բնդնելով պայթումից փլված տեղը, մենք մօտեցանք բարձրացնող կողովին»: Ազատված բանուորներին քննող բժիշկը յայտնել է, որ բժշկական միջոցները ուղղված են գլխաւորապէս բանուորների մէջ փոփոխական ջերմ երևալու առաջն առնելու համար, որովհետև նրանց ստամոքսներում վնասակար նիւթերով կերակրվելու պատճառով առաջացել են մեծ քանակութեամբ պտոմայններ: Բժիշկը յոյս ունի առողջացնել բոլորին:

ՓԱՐԻԶ, 17 մարտի: Պնդում են, որ եթէ աւելի շուտ ձեռնարկվէր Կուրիէրի բանուորների կեանքն ազատելու, ապա շատերը կազատվէին: Մեղադրում են գործադուլի ագիտատորներին որ դեռ երէկ արգելում էին բանուորներին մտնել հորերը և ազատել վնասվածներին:

ԹԵՀՐԱՆ, 17 մարտի: Պարսիկ բժիշկ ֆանատիկոս Կուէմախն Սէյիստանի ազգաբնակութիւն գրգռել է եւրոպական բժիշկների դէմ, որոնք սկսել են տեղափոխել ժանտախտով հիւանդացածներին մասնաւոր տներից հիւանդանոց: Ամբոխը կործանեց հիւանդանոցը, յարձակվեց անգլիական հիւպատոսարանի վրա: Լուրերին նայած, հիւպատոսին և բժշկին ծեծել են փայտերով: Մաքսատունն ազատեց ռուսաց հիւպատոսը, որ եկաւ կօզակներով: Այս բոլորի պատճառ համարում են Խօրասանի նահանգապետին, որ ընդդիմադրելով կառավարութեան հրամանին, ինքնակամ ուղարկել էր այս պարսիկ ֆանատիկոսին Սէյիստան, ապացուցելու՝ թէ չը կայ որ և է ժանտախտ և որ իբր հիւանդութիւնը հնարել են եւրոպացիները:

ԼԱՆ, 17 մարտի: Գործադուլ անողները յանկարծ յարձակվեցին հանքահորերում աշխատող մի բանուորի վրա, երբ սա տուն էր վերադառնում: Բանուորը երկու անգամ կրակ պարպելով վիրաւորեց յարձակվողներից մէկին:

ՊԵՆՍԻԼՎԱՆԻԱ, 17 մարտի: Չը նայած համաձայնութեան, Ինդիանապոլսի կիպաէ գործարանների 8000 բանուորներն վերսկսեցին աշխատանքները Կէյստոն և Զէնիթսոն ընկերութեան հորերում, որը համաձայնեց վճարել սկզբից բանուորների պահանջած աշխատանքի վարձը:

ՆԻՒ-ԵՕՐԿ, 18 մարտի: Քարածուխային հանքերի բանուորները ընդունեցին Լեռնահանքային բանուորների մասնաժողովի առաջարկը, միասին քննելու Նիւ-Եօրկում աշխատավարձի չափը որոշելու հարցը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 մարտի: Պաշտօնական: Մինիստրների խորհուրդը մարտի 17-ի նիստում քննեց հողային բարեկարգութեան գըլխաւոր վարչութեան առաջադրութիւնները՝ բաց թողնելու 1906 թ. փոխատուութիւն, հողային բարեկարգութեան յանձնաժողովի և ազգաբնակութեան փողով օգնութիւն ցոյց տալու համար: Անմիջապէս յանձնաժողովներ հիմնելու կարիքը զգացվում է 300 գաւառներում, որից 240-ը բացառապէս գիւղացիական բանկին աջակցելու նպատակով, իսկ 60-ը՝ հողային բարեկարգութեան ֆունկցիաների համար: Վերջիններիս գործունէութիւնը տարածվում է 16 նահանգների վրա, որտեղ այդ առիթով պէտք է կազմվեն նոյնպէս նահանգական հողային բարեկարգութեան յանձնաժողովներ: Իւրաքանչիւրի մէջ մտնում են 3-ական երկրաչափներ: Պահանջելի փոխատուութիւնը հաշւում է 1300000 րուբլի, որից ժողովրդին փողով օգնելու համար յատկացվում է $^{1}/_{2}$ միլ. րուբլի: Միաժամանակ խորհուրդը քննեց այն տարաձայնութիւնները, որ ծագել էին Պետական Խորհրդի յանձնարարած 1906 թ. ծախքերի նախահաշւի, մի քանի փոփոխութիւններ ծածկելու մտքով, վերաքննութեան: Ծախքերի նախահաշիւը մտադրըվում է կրճատել $3^{1}/_{2}$ միլիոնով: Ապա խորհուրդը լսեց ճանապարհների հաղորդակցութեան մինիստրի առաջադրած նախագիծը՝ երկաթուղային ծառայողների դրութեան, երկաթուղային ծառայութեան կարգապահութեան կանոնների, ծառայողների հանգստի և ծառայութեան ժամանակամիջոցի մասին: Այս նախագծերից առաջինը խորհրդի կարծիքով, կարելի է քննել նոր հիմնած օրէնսդրական կարգով, իսկ միւս երկուսի վերաբերմամբ խորհուրդը սկզբունքով ընդունեց, որ պէտք է ենթարկել նրանց լրացուցիչ մշակման:

ԱԼԺԵԶԻՐԱՍ, 18 մարտի: Բոլոր հարցերի վերաբերմամբ լիակատար համաձայնութիւն է կայացած: Նաւահանգիստները բաժանված են Ֆրանսիայի և Սպանիայի միջև: Ոստիկանութեան հարցի առիթով կայացած համաձայնութիւնը տևելու է 5 տարի, բանկի հարցի վերաբերմամբ Ֆրանսիան ստանում է 3 բաժին, իսկ մնացած մեծ պետութիւնները 1-ական: Քննիչներ լինելու են անգլիական, ֆրանսիական, գերմանական և սպանիական բանկերի կողմից:

19 մարտի

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 17 մարտի: Ստատս-սեկրետար Ռուտը առաջարկեց ներկայացուցչական պալատին—յատկացնել 50,000 դոլլար՝ միջազգային երկրորդ խաղաղարար կոնֆերէնցիային մասնակցելու համար: Կոնֆերէնցիան հաւանօրէն կը գումարվի 1906 թուի ամառը կամ աշնանը:

ԼՕՆԴՕՆ, 17 մարտի: «Դէյլի-Տելեգրաֆին» Կաիրից—ամենաարժանահաւատ աղբիւրներից հաղորդում են, որ Ակաբայի վիճելի կէտերից թուրքական զօրքերի հեռացնելը արդէն սկսվել է: Հաւանօրէն, այս հարցի առթիւ ծագած թիւրիմացութիւնները շուտով կը վերացվեն:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 մարտի: Ներքին գործերի մինիստրի օգնական իշխան Ուրուսովը [illegible] եղաւ պաշտօնից հեռանալ: Նա մտադիր է իր թեկնածութիւնը դնել Կալուժսկի նահանգում Պետական Դումայի անդամութեան համար:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 մարտի: Պետերբուրգի քաղաքապետը առաջարկել է առևտրա-արդիւնաբերական հաստատութիւնների տէրերին՝ մարտի 20-ին փակել իրանց հաստատութիւնները, ընտրութիւնների օրը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 մարտի: Լրագիրների՝ Վիտտէի հիւանդութեան մասին տարածած լուրերի մէջ ճշմարտութեանը ոչ մի նշոյլ չը կայ: Կոմս Վիտտէն իրան բոլորովին առողջ է զգում, և յոգնածութեան մասին խօսք չէ կարող լինել:

ՉԻՏԱ, 18 մարտի: Ձերբակալված են զինուորական վարչութեան նախագահ գնդապետ Դոլօվչաչովը, գիւղատնտես Վոլկովը, անտառապահներ՝ Զօլոտուխին և Բէլօզօրովը, բուխհալտէրներ Տուտօլով և Տօկմակովը, ըստ երևոյթին զինուորական դաշնակցութիւն կազմելու համար: Այսօր քննվելու է երկաթուղային գումարտակի անկարգութիւնների գործը:

ԱԼԺԵԶԻՐԱՍ, 18 մարտի, (Րէյտէր): Բոլոր հարցերի վերաբերմամբ վերջնական համաձայնութիւն է կայացած: Երեկոյեան կայանալու է նիստ՝ արձանագրութիւն կազմելու համար:

ԲԱԳՈՒ, 18 մարտի: Դումայի միջնորդութիւն է յարուցանում թոյլատրել ընտրութիւններին մասնակցել նաև քաղաքային տուրքերը չը վճարած անձանց, պատճառաբանելով այն բացառիկ դժբախտութեամբ, որ անցեալ տարի պատեց քաղաքը:

20 մարտի

ՄՕՍԿՎԱ, 19 մարտի: Ազնուականների արտակարգ ժողովը բացվեց Դուբասովի ճառով: Նահանգական պարագլուխը խնդրեց Դուբասովին կայսրի առ ոտն արկանել Մոսկվայի ազնուականութեան ամենահպատակ զգացմունքների արտայայտութիւնը, որ նա՝ ազնուականութիւնը պէտք է ծառայէ ամբողջ երկրի բարեկեցութեան համար՝ յիշելով պետութեան մատուցած նախկին ծառայութիւնը: Պետական Խորհրդի թեկնածու ընտրեալներ ընտրված են Սամարինը և Տրուբեցկոյ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 մարտի: Քաղաքային համաժողովներում ընտրված են Ալատըրում մի վաճառական, մի քահանայ, երեք գիւղացի. Օպօչկում մանր հողատէրերից երեք գիւղացի և 4 կալուածատէրեր, Կամենէց-Պօդօլսկում—592 գիւղացի և 190 քահանայ, 4 կուսակրօն քահանայ, մի պաշտօնեայ, 6 ստարօօբրեադցիներ, երեք բժիշկ, 15 ազնուական, 6 կալուածատէրեր, Կայդանովում՝ 4 ազնուական, 2 քահանայ, 27 գիւղացի, Միրգօրօդում՝ 8 կազակ և մի գիւղացի:

ԲԵԼՕՍՏՕԿ, 18 մարտի: Ժանդարմական ռոտմիստրի դիւանատանը ռումբ է նետված. մի ժանդարմ սպանված է, իսկ երկուսը վիրաւորված:

ԼՕՄԺԱ, 19 մարտի: Մի կօշկակարի բնակարանում ոստիկանութիւնը երևան հանեց բոնդիստների ժողով: Ձերբակալված են 51 հոգի, որից 4-ը գիմնազիստ և 7-ը գիմնազիստուհիներ են:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 մարտի: Քաղաքի բանւորների լիազօրների ընտրութիւնները հանգիստ անցան: 60 արդիւնաբերական հաստատութիւններից ընտրութիւնները կայացան 26-ում: Խուսափեցին գլխաւորապէս մանր ձեռնարկութիւնները, իսկ խոշորներում ընտրութիւնները կայացան բարեկամաբար:

ԲԵԼՕՍՏՕԿ, 19 մարտի: Ժանդարմական վարչութեան մէջ ռումբի պայթումից յետոյ, խոտի մէջ գտնվեց մի ռումբ ևս: Ձերբակալված են 3 անյայտ անձինք, որոնց բնակարաններում գտնված է 3 ռումբ և պայթուցիկ զանգուած:

ՓԱՐԻԶ, 19 մարտի: Ալժեզիրասում համաձայնութիւն կայանալու առթիւ «Թանը» գրում է. «Մենք միշտ հաւատում էինք համաձայնութեան կարելիութեան, բայց յանդիմանում էինք Գերմանիային այն բանում, որ նա յապաղեցրեց այդ համաձայնութեան կայացնելը: Այժմ, երբ արդէն համաձայնութիւնը կայացաւ, ողջունելով նրան, մենք տեսնում ենք նրա մէջ այն ցանկալի հիմքը, որ անհրաժեշտ է և անդորր, լիակատար փոխադարձ նախազգուշացման համար:»

ԲԵՐԼԻՆ, 18 մարտի: Այն մի շարք լուրերը, որ տալիս է տեղական մամուլը հիմնվելով ռուսաց լրագիրների վրա, որ իբր կոմս Վիտտէն հիւանդ է, իրան զգում է յոգնած—որից և թողնում է պաշտօնը, շատ աննպաստ ազդեցութիւն է անում բորսայում ռուսաց արժեթղթերի վրա: Այդ լուրերի ազդեցութեան տակ, բորսային երէկվայ ժողովում ռուսաց արժեթղթերի գնումը թոյլ էր և նկատվում էր գների անկում:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 մարտի: Լրագիրների ասելով, Գապօնը դիմել է Պետերբուրգի դատաստանական պալատի քննիչին մի ծանուցագրով, որի մէջ խնդրում է կամ ազատութիւն շնորհել իրան, ինչպէս և յունվ. 9-ի շարժման բոլոր մասնակցողներին, որպէս զի նա կարողանայ ապրել Պետերբուրգում, կամ թէ իրան դատարանին յանձնել: Լրագիրները հաղորդում են, որ Վոլգայի, հարաւ-արևելեան և ազովօ-չերնամորեան բորսային կոմիտէտների ներկայացուցիչները բողոքագիր են ներկայացրել Պետական խորհրդին, խնդրելով բեկանել մարտի 16-ին առևտրի և արդիւնաբերութեան կողմից Պետական խորհրդի համար եղած ընտրութիւնները, մատնացոյց անելով այն հանգամանքի վրա, որ ընտրեալների, ինչպէս և ընտրողների մէջ եղել են այնպիսի անձինք, որոնք չեն կարող օրինական ներկայացուցիչներ համարվել առևտրա-արդիւնաբերական դասակարգի կողմից, որովհետև մի քանիսները չեն ժողովվել պրոմիսլային վկայականներ, իսկ միւսները չունեն որոշած կրթական ցէնզ:

ԱՍԽԱԲԱԴ, 19 մարտի: Շրջանի կառավարչի տան դիմաց ռումբ պայթեց: Պայթումը լսվեց քաղաքի հեռաւոր մասերում: Տան պատուհանի ապակիները ջարդ ու փշուր եղան, մի քանիսը ճեղքվեցին: Տան դիմաց գտնվող թնդանօթը տեղահան է արված: Վնասվածներ չը կան: Մեղաւորները չեն գտնված. ռումբի հետքեր չը կան: Վերջին ձերբակալութիւնների հետ միաժամանակ քաղաքի երկաթուղային ծառայողների մէջ լուր է տարածված, որ իբր պատրաստվում է զինված յարձակում և ապստամբութիւն, որի համար էլ գիշերվայ պահպանութիւնը՝ ուժեղացրած է պահակներով:

ԲԵՐԼԻՆ, 19 մարտի: Մի օֆիցերից և 16 զինուորներից բաղկացած գերմանական մի պահակախումբ, հարաւային Աֆրիկայում ենթարկվել է հօտէնտօտների յարձակման: Օֆիցերը և 10 զինուոր սպանված են, չորսը վիրաւորված, մէկը կորել է, իսկ մէկին աջողվել է փախչել:

ԿՐՕՆՇՏԱԴ, 19 մարտի: 26-ին և 27-ին անկարգութիւններին մասնակցող մեղադրեալների առիթով կայացած զինուորական դատաստանի վճռով 207 մեղադրեալներից 84-ը արդար են ճանաչված, իսկ 129 զինուորներ մեղաւոր են ճանաչված, որոնցից 1-ը դատապարտված է անդարձ աքսորի, 1-ը՝ 20 տարով, 4-ը՝ 12 տարով, 2-ը՝ 8 տարով, 1-ը՝ 6 տարով, իրաւունքներից զրկվելով և թիապարտների բաժին յանձնվում են 36 հոգի, ուղղիչ բանտը՝ 32 հոգի, 1-ը 20 օրով խիստ բանտարկութեան, 1-ը պաշտօնից արձակված է, իսկ իրաւունքներից զրկվելով դրվում են կարգապահ բաժինը 18 հոգի: Դատարանը գտել է, որ վարչութիւնը հարկաւոր օգնութիւնը չէ ցոյց տալիս զինուորա-ծովային դատարանին՝ խռովութիւնները զսպելու ժամանակ: Վերջնական դատավճիռը կը հրատարակվի մարտի 30-ին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 մարտի: Գիտութեան ճեմարանը Պետական Խորհրդի համար ընտրել է Շախմատով և Լապօ—Դանիլևսկի ակադեմիկներին, իսկ համալսարանը ընտրել է Բորգման, Ինոստրանցեւ և Սէրգէեւիչ պրոֆէսօրներին: Հողատէրերի համաժողովին ընտրված են Կիևի գաւառում 77 գիւղացի, 5 քաղաքացի, մի քահանայ, շրջանային տանուտէրը:—Վիսէգօնսկ բանտում, գիշերը պահնորդութեան ժամանակ, հինգ բանտարկեալներ յարձակվելով երկու վերակացուների վրա, խլեցին բանտային բաժանմունքների բանալիները և ատրճանակները և անյայտացան:

ՕԴԵՍՍԱ, 19 մարտի: «Օդէսսայի բոլոր բանուորներին» վերնագրով թռուցիկներ տարածելու համար զինուորական դատարանը Բինգօն քաղաքացուն դատապարտեց 2 տարվայ բանտարկութեան, Գօլօսօվկերին 17 տարով աքսորի և իրաւունքներից զրկման, Օդեսայի սօցիալ յեղափոխական կոմիտէտին և տուրք ժողովող յանձնաժողովին պատկանելու համար: Զինուորական դատարանին յանձնվում է Խերսոնի կարգապահ գումարտակի զինուոր Ժուկովը, որ մեղադրվում է նրա մէջ, որ պայմանաւորվել է ուրիշ զինուորների հետ գումարտակի կառավարիչ գնդապետ Դավիդօվին սպանելու, անկարգութիւններ առաջացնելու համար, ինչպէս և սպանել ուրիշ պաշտօնեաներին: Կատարելով այդ բռնադրութիւնը, 1905 թ. յունիսի 20-ին Ժուկովը զինավարժութեան ժամանակ միւսների հետ յարձակվել է գնդապետ Դաւիդօվի վրա, նրան սպանելու նպատակով և երբ Դաւիդօվն ընկել է, նա յարձակվել է զօրավաշտի հրամանատար կապիտան Միրգօրօդսկու վրա, որին սուիններով և քարերով թեթև վէրքեր և հարւածներ են հասցրել:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից:
ԱՌԱՒՕՏԵՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Ց. Մ. ՋԻԿՈՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի. ներքին և նեարդային:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ճ. Գ. ՀԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՋԻՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ց. ԳՈՒՐԳԵՆՈՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՒԼԻՆՈՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ. և ծաղկահատ.
Խ. Գ. ԱՐԵԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի: [illegible] և օպերացիայի համար սենեակներ:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

Լոյս տեսաւ
ԳԻԼԻՍՏԱՆՑԻ
ՄԿԱ ՎԱԽ ՉՈՒՆԻՄ
Պատկեր հայ գաղթականների կեանքից:
Գինն է 12 կոպ.
ճանապարհածախսով 15 կոպ. վաճառքի ամբողջ արդիւնքը յատկացվում է հայ արկածեալների օգտին:
Դիմել՝ Карсъ. Аствацатуръ Бекъ-Овсепянъ.
1—3

Լոյս տեսաւ
═ՍԱՓՐԻՉ═
Գրական-հումոր-սատիրական ամսաթերթի առաջին համարը 12 հատ գունաւոր պատկերներով 24×32 սանտ. մեծադիր երեսներով փօրեն թղթի վրա:
Տարեկան բաժանորդագինն է 2 րուբլի. արտասահմանում 2 րուբլի 50 կ. առանձին համարները 15 կոպ. բաժանորդագրութիւնը շարունակվում է:
Հասցէ՝ С.-Петерб. Казанская 46. ред. «Сапричъ»: 1—2

Ամուսնուս վախճանվելուց յետոյ, ծախում եմ հիւրանոց
„ԵԱԼՏԱ“
ցանկացողները կարող են հարցնել հէնց այնտեղ:
Թիֆլիսի 5-րդ քաղաքամաս. Սևերեաննայեա փող. № 49: 1—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ սրանով յայտարարում է, որ նա մարտի 27-ին 1906 թ. ցերեկվայ ժամը 1-ին նշանակել է աճուրդ ձիաներ, տաչկաներ և սայլեր մատակարարելու, փողոցները և փողոցային սիֆօններ մաքրելու համար և ջրելու, և անմաքրութիւններ արտահանելու սայլերի համար: Աճուրդի ժամանակ պէտք է ներկայացնել գրաւական 800 րուբլի: Մանրամասն տեղեկութիւնների համար դիմել ասսենիզացիայի կառավարչին շինարարութեան բաժնում ամեն օր, բացի տօն օրերից, առաւօտեան ժամը 10-ից մինչև 1-ը: 1—2

„ԱՐԳԱՍԻՔ“
Գրական, գիտական, հասարակական
ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ
Առաջին համարը լոյս է տեսնում Զատկին, ապա, սեփական գրաշարներ և նոր տառեր ունենալով,—յուլիսի մէկից կանոնաւոր: Կէս տարվան բաժանորդագինը. Թիֆլիսում՝ 1 ր. 50 կ., Ռուսաստանում՝ 2 ր., արտասահման՝ 7 ֆր.
Դիմել՝ Тифлисъ, редакція „Аргасикъ“, Судебная № 54. Արտասահմանից՝ Tiflis, Russie (Caucase) rèdaction «Argassik».
Խմբագիր-հրատ.՝ Ալ. Պարղեանց
1—3

ԲԺՇԿԱՊԵՏ Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
Նախկին օրդինատոր Մոսկվայի համալսարանի կլինիկայի
Վերսկսեց ընդունելութիւնը՝ յատկապէս միզասեռական, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւններ ունեցողներին: Ընդունելութիւնը ամեն օր՝ 10—11 ժամին առաւօտեան և 5—7 ժամին երեկոյեան: Բարիշևսկայա փող. № 1, «պօժարնի կօմանդի» դիմացը. տելէֆօն № 11.
(ա. օ.) 2—20

ԲԺԻՇԿ
Լևոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.: Կանանց և երեխաների համար 11—12 ժ.: Հասցէն անկիւն Գօլովինսկի պրօսպէկտի և Կաղեսկայեա փողոցի, տուն Թումանեանի: Մուտքը Կաղեսկի փողոցից № 2,
(ա. օ.) 112—300

Կենտրոնական գրավաճառանոցում
Թիֆլիսում վաճառվում են հետևեալ գրքերը.
Առաքելեան Հ. Մի ամիս արևելքում. գ. 40 կ.:
Աղանեան ա. ք. Գիւտ. Կարս, բիւզանդական կեանքից. գ. 5 կ.:
Բագրատունի Ա. ա. ք. Բարի մայր Մարիամը. գ. 20 կ.:
Գիլիստանցի. Մկա վախ չունեմ. գ. 15 կ.:
Եսայեան Յ. Միննոյն դագաղում. գ. 7 կ.:
Երիցեան Գ. Հայկական նշանագրեր գաղանչարի համար. գ. 40 կ.:
Էրկման-Շատրիան. Մի գիւղացու պատմութիւն 1789—1792. գ. 1 ր. 25 կ.:
Լալայեան Նիկ. Արդարութեան նշանակութիւնը կեանքի մէջ. գ. 10 կ.:
Կրիմսկի Ա. Մահմեդական Աշխարհն և նրա ապագան. Թարգմ. Բ. վարդապետ. գ. 60 կ.:
Շահրիար. Արամի պսակը. գ. 6 կ.:
Բամալեան Ս. Սիրելի հերոս. գ. 25 կ.:
Շեհրն. Հիւանդ մարդը. գ. 30 կ.:
Բալասանեան. Որբիկների արցունքները. գ. 30 կ.:
Պատիկ Մհեր. գ. 25 կ.:
Ֆալկօնէ. (լրտես) գ. 7 կ.:

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՇԵՐԱՄԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆԻ
ՊԱՀԵՍՏՈՒՄ,
Մուշտայիդ այգում, վաճառվում է ՇԵՐԱՄԻ ԸՆՏԻՐ ՍԵՐՄ դեղին և սպիտակ տեսակի, մսխալը 40 կոպ.
Թթենիներ, այգեպահական և շերամապահական գործիքներ
ՁԵՌՆԱՐԿՆԵՐ ԵՒ ՀԱՍԱՔԱԾՈՒՆԵՐ,
Մեղուապահական գործիքներ,
ԴԱԴԱՆ-ԲԼԱՏՏԻ ԵՒ ԳԵՏԳՈՆԻ ՓԵԹԱԿՆԵՐ, ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐԸ 4 ՌՈՒԲԼՈՒՑ
ՍԿՍԱԾ: Մեծ քանակութեամբ գնողներին զիջումն է լինում:
Արհեստական մոմաթերթ, (вощина) գործիքներ, ցենտրաֆուգներ, նկարներ, քարտէզներ, ձեռնարկներ և այլն:
(Ե.Կ.Շ.) Գների ցուցակը ուղարկվում է ՁՐԻ: 7—25

Տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ.
Электропечатня типографскаго Т—ва Гермесъ, Мад. ул. № 15